ԻՆՉՊԵՍ ՀՐԵՇՏԱԿԸ ԵԿԱՎ ԻՆՁ ՄՈՏ ԵՒ ՆՐԱ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվ եղբայրները հավանաբար...Այստեղ մի քանի մագնիտոֆոններ եմ տեսնում, նրանք, անշուշտ, այս ձայնագրությունը կանեն: Ամեն անգամ, երբ ուզում եք իմանալ, թե Սուրբ Հոգին ինչ է ձեզ ասել, դիմեք այստեղի եղբայրներին, որոնց մոտ են այս մագնիտոֆոնները, նրանք կարող են ձայներիզը ետ ու առաջ անել, և դուք ճշգրտորեն կարող եք լսել ձեր դեպքը: Եվ հսկեք ու տեսեք, թե արդյոք դա չի կատարվի ճիշտ այնպես, ինչպես ասվել է, հասկանում եք: Երբ լսում եք, որ ասվում է. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. «Որոշակի բան կամ *սա այսպես* է», կամ պարզապես ստուգեք և տեսնեք, թե արդյոք դա ճիշտ է, թե ոչ: Հասկանո՞ւմ եք: Դա միշտ այդպես է:

2 Հիմա, փոքրիկ նախապատմության համար...Ես ուրախ եմ այս երեկո, որ մի քանիսս ենք այստեղ: Մենք այստեղ պարզապես տնավարի ենք, այնպես չէ՞: Մենք չ...մեզանից ոչ ոք օտար չէ: Մենք չ...Ես կարող եմ կիրառել քենթուկյան իմ քերականությունը և ինձ զգալ ինչպես տանը, որովհետև մենք, մենք պարզապես...Ես հիմա չեմ արհամարում քենթուկցիներին, եթե այստեղ Քենթուկիից որևէ մեկը կա: Այստեղ Քենթուկիից որևէ մեկը կա՞: Բարձրացրեք ձեր ձեռքը: Լսի՛ր: Հե՜յ, ես կարող եմ ինձ զգամ ինչպես տանը, այնպես չէ՞: Շատ լավ է:

3 Մայրիկս պանսիոնատ էր վարում: Եվ ես մի օր գնացի այնտեղ, որ պարզեմ...Այնտեղ տղամարդկանց մի մեծ խումբ էր նստած, և մի մեծ ու երկար սեղան էր տեղադրված: Ես ասացի. — Այստեղ քանի՞սն ես Քենթուկիից, թող ոտքի կանգնեն: Բոլորը ոտքի ելան: Այդ երեկո գնացի եկեղեցի՝ իմ եկեղեցին, և ասացի. — Այստեղ քանի՞սն ես Քենթուկիից: Բոլորը ոտքի ելան: Ես ասացի. — Դե, դա շատ լավ է: Միսիոներները լավ աշխատանք են կատարել, ուստի մենք շատ շնորհակալ ենք դրա համար:

4 Հիմա, անդրադառնանք Հռոմեացիս թղթին, 11-րդ

գլուխ 28–րդ համար: Այժմ ուշադիր լսե՛ք Սուրբ Գրքի ընթերցանությունը:

> *Ինչ ավետարանին է վերաբերում, նրանք թշնամի են ձեր պատճառով, բայց ընտրությանը նայելով՝ սիրելի են…հայրերի պատճառով.*
>
> *Որովհետև Աստծո պարգևները և* կոչումներն *անդառնալի են:*

5 Աղոթենք: Տե՛ր, օգնիր մեզ այսօր, երբ ակնածանքով, մեր ողջ սրտով, անկեղծությամբ մոտենում ենք սրան, այս բաները միայն Քո փառքի համար ասվեցին: Եվ օգնիր ինձ, Տե՛ր, և դիր իմ մտքում միայն այն բաները, որոնք պետք է ասվեն և ինչքան պետք է ասվեն: Կանգնեցրու ինձ, երբ Քո ժամանակը գա: Խնդրում եմ, որ ամեն սիրտ ընդունի այս բաներն ի օգուտ այս լսարանում գտնվող հիվանդների և կարիքավորների: Որովհետև ես սա խնդրում եմ Հիսուս Քրիստոսի Անունով: Ամեն:

6 Հիմա, քանի քիչ ենք, ես կուզենայի մոտենալ այս թեմային: Եվ, և ես կփորձեմ ձեզ շատ երկար չպահել, ժամացույցս կդնեմ այստեղ և կջանամ հնարավոր ամեն բան անել ձեզ ժամանակին բաց թողնելու համար, որպեսզի կարողանաք վաղը երեկոյան վերադառնալ: Հիմա աղոթքի մեջ եղեք: Կարծեմ տղան նույնիսկ քարտեր չի բաժանել: Չեմ հարցրել, թե արդյոք նա…Եվ եթե չեն բաժանել, կամ բաժանել են թե չեն բաժանել, կարևոր չէ: Ամեն դեպքում մենք այստեղ քարտեր ունենք, եթե հարկ լինի մի քանիսին կանչելու: Իսկ եթե ոչ, կտեսնենք, թե Սուրբ Հոգին ինչ կասի:

7 Հիմա, եթե ուշադիր լսեք…Հիմա, սա կարող է…քանի որ ես…Մենք այստեղ ընդամենը մի քանիսն ենք, և սա ասելու համար լավ ժամանակ է, որովհետև դա, դա անհատապես ինձ է վերաբերում: Դրա համար ես այսօր սուրբգրային այս համարը կարդացի, որպեսզի կարողանաք տեսնել, որ այդ պարգևներն ու կոչումները որևէ բան չէ, որ որևէ մեկը կարող է վաստակել:

8 Պողոսն այստեղ խոսելով, ասում է. «Հրեաներն Ավետարանի Լույսից կույր եղան և հեռացան Աստծուց մեր պատճառով»: Բայց մի համար դրանից հետո ասում է. *«Ամբողջ Իսրայելը կփրկվի»:* Ամբողջ Իսրայելը կփրկվի: Ընտրության համաձայն, Հայր Աստվածը սիրեց և կուրացրեց նրանց, որպեսզի մենք՝ հեթանոսներս, հիմա ապաշխարության տեղ ունենանք, որ Աբրահամի միջոցով

նրա Սերունդը կարողանա օրհնել ամբողջ աշխարհն Իր Խոսքի համեմատ: Տեսնո՞ւմ եք, թե ինչպիսին է Աստծո ինքնիշխանությունը: Նրա Խոսքը պարզապես պետք է կատարվի: Նա այլ բան պարզապես լինել չի կարող: Եվ հիմա մենք...Աստված ընտրել է մեզ. Նա ընտրել է հրեաներին. և Նա...

9 Այս ամենն Աստծո կանխագիտությունն է: Երբ Նա ասաց, թե ինչ է լինելու, Նա կանխավ գիտեր դա: Հիմա, որպեսզի Աստված Աստված լինի, Նա պետք է վերջն իմանար սկզբից առաջ, այլապես Նա անսահման Աստված չէր լինի: Աստված չի կամենում, որ որևէ մեկը կորսվի: Անշուշտ, ոչ: Նա չի ուզում, որ որևէ մեկը կորսվի: Բայց այս աշխարհի օրերի սկզբից, Աստված ստույգ գիտեր, թե ով փրկվելու է և ով չի փրկվելու: Նա չէր ուզում, որ մարդիկ կորսվեն. «Նրա կամքը չէ, որ որևէ մեկը կորսվի, այլ որ ամենքը փրկվեն», բայց Նա ի սկզբանե գիտեր, թե ովքեր են կորսվելու և ովքեր՝ ոչ: Դա է պատճառը, որ Նա կարողացավ կանխասել. «*Այս* բանը կկատարվի: *Այն* բանը կկատարվի», կամ «*սա դա* կլինի: *Այս* մարդն *այդպիսին* կլինի»: Հասկանո՞ւմ եք:

10 Նա կարող էր նախապես իմանալ դա, որովհետև Ինքը անսահման է: Եթե դուք գիտեք, թե դա ինչ է նշանակում, այն է՝ «չկա մի բան, որ Նա չիմանա»: Տեսնում եք, Նա գիտի: Չկա ոչինչ ժամանակներից առաջ, դրանից հետո էլ այլևս ժամանակ չի լինի, հասկանում եք, մինչդեռ Նա գիտի ամեն բան: Ամեն բան Իր մտքում է: Ինչպես Պողոսն է ասում Հռոմեացիների 8-րդ և 9-րդ գլուխներում. «Ուրեմն էլ ինչո՞ւ է մեղադրում»: Այսպիսով մենք տեսնում ենք դա, բայց Աստված...

11 Ավետարանը քարոզելու պես: Մեկն ասաց. — Բրանհա՛մ եղբայր, դուք հավատո՞ւմ եք Դրան:

— Նայի՛ր:

— Դո՞ւք պետք է, որ կալվինիստ լինեք:

— Ես կալվինիստ եմ այնքան ժամանակ, քանի դեռ կալվինիզմը գտնվում է Աստվածաշնչի շրջանակներում:

12 Հիմա, Ծառի վրա ճյուղ կա, որը կալվինիզմն է, բայց Դրա վրա էլի ճյուղեր կան: Ծառը մեկից ավելի ճյուղեր ունի: Նա պարզապես ուզում էր տանել դա առաջ հավիտենական Անվտանգության մեջ, և որոշ ժամանակ անց սկսում ես մտնել ունիվերսալիզմի մեջ և այնտեղից դուրս ես գալիս ինչ-որ տեղ, դա վերջ չունի: Բայց

երբ դու վերջացնում ես Կալվինիզմի հետ բարձրացիր վերև և սկսիր արմինիանիզմից: Տեսնում եք, Ծառի վրա ևս մի ճյուղ կա, էլի մի ճյուղ Ծառի վրա, պարզապես շարունակիր գնալ առաջ: Այդ ամենը միասին Ծառ է կազմում: Դրա համար ես հավատում եմ...Կալվինիզմին քանի դեռ այն մնում է Սուրբ Գրքի շրջանակներում:

13 Նաև հավատում եմ, որ Աստված նախքան աշխարհի ստեղծելը գիտեր, Իր Եկեղեցին Քրիստոսի մեջ ընտրեց, և Քրիստոսին մորթեց աշխարհի ստեղծումից առաջ: Սուրբ Գիրքն է այդպես ասում. «Նա էր Աստծո Գառը, որ մորթվեց աշխարհի ստեղծումից առաջ»: Տեսնո՞ւմ եք: Հիսուսն էլ է ասում, որ Նա մեզ ճանաչեց աշխարհի ստեղծումից առաջ, Պողոսն է դա ասում. «Նա, Նա մեզ ճանաչեց և որդեգրության նախասահմանեց Հիսուս Քրիստոսի ձեռքով նախքան աշխարհի ձևավորվելը»: Դա Աստված է: Դա մեր Հայրն է: Հասկանո՞ւմ եք:

14 Ուստի մի՛ անհանգստացեք, անիվները ճիշտ են պտտվում, ամեն բան ժամանակին է տեղի ունենում: Միակ բանը՝ պտույտի մեջ ընկնելն է: Եվ դա, դա դրա լավ կողմն է, այդժամ դու գիտես, թե ինչպես գործել, երբ մտնում ես այդ պտույտի մեջ:

15 Հիմա, ուշադրությո՛ւն դարձրեք. «Պարգևները և կոչումներն անդառնալի են», դա միակ ձևն է, որով ես կարողացա, կարողացա սուրբգրային ձևով դնել իմ կոչումը Տիրոջ մեջ: Եվ ես հավատում եմ, որ ես այսօր այն ընկերներիս հետ եմ, ովքեր, անշուշտ, կհասկանան և չեն մտածի, որ դա կապված է անձի հետ, այլ որպեսզի դուք գաղափար կազմեք և իմանաք, թե ինչ, ինչ է Տերն ասել, որ կանի, և գտնեք շարժվող ինչ-որ մի բան և հետևեք դրան:

16 Հիմա, ամենասկզբում, առաջին բանը, որ կարող եմ հիշել, տեսիլքն էր: Առաջին բանը, որ հիշում եմ, տեսիլքն էր, որ Տերը տվեց ինձ: Եվ դա վաղուց, շա՜տ վաղուց էր, ես ընդամենը փոքրիկ երեխա էի: Ձեռքիս մեջ քար էր:

17 Հիմա, ես ներողություն եմ խնդրում, ես հիշում եմ, թե երբ էի երկար զգեստ հագնում: Չգիտեմ, դուք (ձեզանից որևէ մեկը) տարիքավորներից հիշում են, թե փոքրիկ տղաները երբ էին երկար զգեստ հագնում: Այստեղ քանի՞սն են հիշում, թե երբ էին երեխաները հագնում, այո, երկար զգեստներ: Ես հիշում եմ իմ փոքրիկ հին խրճիթում, որտեղ ապրում էինք, չոչ էի անում հատակին: Եվ ինչ–որ մեկը, չգիտեմ, թե ով էր դա, ներս մտավ: Մայրիկը հագուստիս մեջ փոքրիկ, փոքրիկ կապույտ

ժապավեն էր գործել։ Հազիվ էի քայլում։ Բայց այդ ժամանակ ես չոչ էի անում, և մատս մցրի նրա ոտքերին եղող ձյան մեջ, և ուտում էի այդ ձյունը նրա ոտքերի վրայից, երբ նա վառարանի մոտ կանգնած տաքանում էր։ Հիշում եմ, թե ինչպես մայրս դրա համար թակեց ինձ։

18 Հաջորդ բանը, որ հիշում եմ, պետք է, որ մոտ երկու տարի անց լիներ, որ ձեռքիս մեջ փոքրիկ քար էր։ Ես այդ ժամանակ մոտ երեք տարեկան էի, իսկ փոքրիկ եղբայրս մոտավորապես երկու տարեկան էլ բոլորած չկար։ Մենք բակի հետևում էինք, որտեղ ցախ էին հավաքում, որտեղ փայտը բերում և կտրատում էին։ Քանի՞սն են հիշում այն ժամանակները, երբ փայտը քաշում–բերում էին հետևի բակը և կտրատում էին։ Եվ ինչո՞ւ եմ այսօր փողկապ կապել։ Ես, ես տանն եմ։

19 Հետո, երբ նրանք...Այնտեղ հին ցախի բակում վազում էր մի փոքրիկ արվակ, որը հոսում էր աղբյուրից։ Գարնանն այնտեղ՝ որտեղից մենք ջուր էինք հանում հին դդմե շերեփ ունեինք, ջուրը լցնում էինք հին դույլերի, հին մայրի դույլերի մեջ և իջեցնում էինք ներքև։

20 Հիշում եմ, երբ վերջին անգամ մահից առաջ տեսա իմ ծեր տատիկին, նա հարյուր տասը տարեկան էր։ Եվ երբ նա մահանում էր, ես վերցրեցի նրան գիրկս և այսպես պահեցի նրան, անմիջապես իր մահից առաջ։ Նա գրկեց ինձ և ասաց, երբ մահանում էր. — Թող Աստված հավիտյան օրհնի քո հոգին, սիրելիս։

21 Չեմ կարծում, որ այդ կինը երբևիցե իր կյանքում սեփական մի, մի զույգ կոշիկ է ունեցել։ Հիշում եմ նաև, թե ինչպես էի հետևում նրան, նույնիսկ երբ երիտասարդ էի, գնում էի իրենց տեսության, ամեն առավոտ վեր էր կենում և ոտաբոբիկ այդ ձյուների միջով գնում էր աղբյուրի մոտ, դույլը լցնում էր ջրով և այդ ձյուների միջով հետ էր գալիս։ Այնպես որ դա ձեզ չի վնասի, հարյուր տաս տարի նա ապրեց։ Նա (այո, սրը) նաև շատ–շատ դիմացկուն կին էր։

22 Հետո հիշում եմ, որ նա ուզում էր ինձ պատմել հայրիկիս գնդակախաղերի մասին, որոնցով նա խաղում էր մանուկ հասակում։ «Այդ խեղճ կինը,— մտածում էի ես,— ինչպե՞ս է բարձրանալու այդ ձեղնահարկը»։ Փոքրիկ երկսենյականոց խրճիթ էր, և այն ձեղնահարկ ուներ։ Տանիք բարձրանալու համար աստիճանը պատրաստված էր երկու նորատունկ ճյուղերից։ Դե, ես ասացի...

23 Դե, հիմա, նա ասաց. — Ճաշից հետո ես քեզ կպատմեմ, ցույց կտամ, քո, քո հայրիկի գնդակաղաղերը։

— Լավ։

24 Նա պատրաստվում էր դրանք ցույց տալ ինձ, վերևի սունդուկում էին, որտեղ պահում էր իր իրերը, ինչպես տատիկերն են անում։ Ես մտածեցի. «Ինչպե՞ս է այս խեղճ ծեր կինը բարձրանալու այդ սանդուղքով»։ Դրա համար մոտեցա և ասացի. — Տատի՛կ,— ասացի ես,— սպասի՛ր սիրելիս, ես կբարձրանամ այնտեղ և կօգնեմ քեզ։

25 — Մի կողմ կանգնիր։ Նա սկյուռի պես բարձրացավ այդ սանդուղքով։ Ասաց. — Դե, արի՛։

— Լավ, տատիկ։

26 Ես մտածեցի. «Ո՛հ, Աստված իմ, եթե ես միայն կարողանայի այդպիսին լինել, հարյուր տաս տարեկանում այդքան ուժ ունենայի ինձանում»։

27 Հետո հիշում եմ, որ այդ հին աղբյուրի մոտ էի և ձեռքումս քար կար, ես այն այսպես նետում էի ցեխի մեջ, փորձելով ցույց տալ փոքրիկ եղբորս, թե ինչքան ուժեղ եմ ես։ Եվ այնտեղ՝ ծառի վրա մի թռչուն էր նստած, և նա ծլվլում, թռվռում էր, փոքրիկ շիկահավ էր կամ նման մի բան։ Եվ այդ փոքրիկ շիկահավը, ես կարծեցի, թե նա խոսեց ինձ հետ։ Ես շրջվեցի և ականջ դրեցի, բայց այն թռավ գնաց, և մի Ձայն ասաց. *«Դու քո կյանքի մեծ մասն անցկացնելու ես Նյու Օլբանի անունով քաղաքից ոչ հեռու»։*

28 Այն երեք մղոն է հեռու այնտեղից, որտեղ մեծացել եմ։ Մոտ մեկ տարի հետո գնացինք այդտեղ, գաղափար անգամ չունենալով, թե ինչու ենք գնում...Նյու Օլբանի։ Թե ինչպես էին այս բաները ողջ կյանքի ընթացքում...

29 Հիմա տեսե՛ք, իմ հարազատները կրոնավոր չեն եղել։ Հայրս ու մայրս եկեղեցի չէին գնում։ Մինչ այդ նրանք կաթոլիկ են եղել։

30 Իմ փոքրիկ զարմիկը կարծեմ այսօր նստած է այստեղ՝ ինչ–որ տեղ, չգիտեմ։ Նա զինվոր է։ Ես աղոթում եմ նրա համար։ Նա կաթոլիկ է և դեռ շարունակում է կաթոլիկ մնալ։ Անցած երեկո, երբ նա այստեղ էր և տեսավ Աստծո այդ գործերը, կանգնած էր հենց այնտեղ՝ հարթակում։ Նա ասաց, այնտեղ կանգնած, ասաց. — Հորեղբայր Բի՞լլ։ Երկար ժամանակ ծովի այն կողմում է եղել, ասաց. — Երբ ես տեսա այդ...— ասաց,— դա, դա կաթոլիկ եկեղեցում

չի կատարվում,— ասաց,— դա...Ես, ես կարծում եմ, հորեղբայր Բիլլ, որ դուք ճիշտ եք:

31 — Սիրելի՛ս, ոչ թե *ես*, այլ այդ Նա է ճիշտ: Տեսնում եք, *Նա է* ճիշտ: Եվ այսպես նա ասաց, որ ինքը...Ես ասացի. — Ես քեզ չեմ խնդրում, որ որևէ բան անես, Մելվին, բայց պարզապես ծառայիր Տեր Հիսուս Քրիստոսին քո ամբողջ սրտով: Գնա, ուր ուզում ես: Բայց սրտիդ մեջ վստահ եղիր, որ Հիսուս Քրիստոսը վերածնվել է քո սրտում: Դրանից հետո որ եկեղեցին ուզում ես գնա:

32 Հիմա, բայց հարազատներս մինչ ինձ կաթոլիկ են եղել: Հայրս իռլանդացի է, իսկ մայրս՝ իռլանդուհի: Իռլանդական արյան մեջ միակ խախտողը տատս էր, ով չերոկի հնդկացի էր: Մայրս գրեթե կիսով չափ մետիս է: Այդ ժամանակ ես...ինձ, իմ...մեր սերունդը, երեքից հետո այն վերացավ: Բայց դա զտարյուն իռլանդացի լինելու միակ խախտումն էր, ազգանունները Հարվի և Բրանհամ են եղել: Դրանից առաջ Լայոն է եղել, որը դեռևս իռլանդական է: Եվ հետո նրանք բոլորը կաթոլիկ են եղել: Բայց ես ինքս, մենք՝ որպես երեխաներ, ընդհանրապես ոչ մի կրոնական դաստիարակություն կամ կրթություն չենք ունեցել:

33 Բայց այդ պարգևները, այդ տեսիլքները, ես այդ ժամանակ տեսիլքներ էի տեսնում այնպես, ինչպես հիմա, դա ճիշտ է, որովհետև պարգևները և կոչումներն անդառնալի են: Դա Աստծո կանխագիտությունն է, Աստված ինչ-որ բան է անում: Ողջ կյանքի ընթացքում ես վախեցել եմ դրա մասին որևէ բան ասել:

34 Դուք կարդացել եմ իմ պատմությունը փոքրիկ գրքույկի մեջ, որը կոչվում է՝ *«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան»*: Կարծեմ այն այս գրքերի մեջ է, այդ մյուս գրքերում: Ճի՞շտ է դա, Ջինի: Այն այս կանոնավոր, կանոնավոր գրքի մեջ է, որը մենք հիմա ունե՞նք: *Կյանքի պատմությո՞ւն է:* Կարծում եմ՝ այո: Հետո, երբ ունենանք...Մի՞թե դա սարսափելի չէ: Իմ գրքերն են, իսկ ես ինքս երբեք չեմ կարդացել դրանք: Բայց ուրիշն է գրում դրանք, հետո նրանք որոշները բերում են հավաքույթի վայրը: Ես դրանով չեմ զբաղվում, դրա համար միշտ սպասում եմ էլի ինչ-որ բանի կատարվելուն: Լավ գրքեր են, դրանց որոշ մասերն այստեղից և այնտեղից կարդացել եմ, երբ հնարավորություն եմ ունենում:

35 Եվ հիմա, համենայն դեպս որպես, որպես փոքրիկ տղա, դուք գիտեք, թե տեսիլքն ինչպես խոսեց ինձ հետ, ես մոտավորապես յոթ տարեկան էի, և ասաց. *«Երբեք չիմես, չծխես և չպղծես մարմինդ ոչ մի ձևով: Երբ մեծանաս քեզ համար աշխատանք կլինի»:* Դուք լսել եք այդ մասին պատմվում է գրքում: Դե, դա ճիշտ է: Ամբողջ ընթացքում դա շարունակում էր կատարվել:

36 Երբ ես ծառայող դարձա, այդ ժամանակ դա, այդ ժամանակ դա իսկապես սկսեց անընդհատ կատարվել:

37 Մի գիշեր ես տեսա մեր Տեր Հիսուսին: Ես սա ասում եմ, հավատում եմ, Սուրբ Հոգու թույլտվությամբ: Տիրոջ Հրեշտակը, որ գալիս է, դա Տեր Հիսուսը չէ: Նույն տեսիլքի մեջ դա Նրա նման չի: Որովհետև տեսիլքը, որ ես տեսա Տեր Հիսուսի մասին, այնտեղ Նա փոքրոտ Մարդ էր: Նա չ...Դաշտում էի, աղոթում էի հորս համար: Ես նորից եկա ու պառկեցի, և այդ երեկո նայեցի Նրան և ես, ես ասացի. — Ո՛վ Աստված, փրկի՛ր նրան:

38 Մայրս արդեն փրկված էր, և ես մկրտել էի նրան: Հետո մտածեցի. «Ո՛հ, հայրս այնքա՜ն է խմում»: Մտածեցի. «Եթե միայն կարողանայի այնպես անել, որ նա ընդուներ Տեր Հիսուսին»: Դուրս եկա և պառկեցի դիմացի սենյակի փոքրիկ հին ծղոտե ներքնակի վրա, որը գտնվում էր դռան կողքին:

39 Եվ ինչ-որ Բան ինձ ասաց՝ Վե՛ր կաց: Ես վեր կացա և գնացի իմ հետևում գտնվող դաշտը՝ հին ցախավելի և եղեսպակի դաշտը:

40 Այնտեղ ինձանից տասը ոտնաչափ հեռավորության վրա սպիտակ հագուստով մի Մարդ էր կանգնած, ցածրահասակ Մարդ էր: Ձեռքերն *այսպես* խաչված էին, մորուքը կարճ կտրած, մազերը փռված էր ուսերին. և Նա *այսպես* ինձանից մի կողմ էր նայում, խաղաղ տեսք ունեցող կերպար էր: Բայց ես չէի կարողանում դա հասկանալ, թե ինչպես էին Նրա ոտքերը մեկը մյուսից առաջ: Քամին էլ փչում էր, Նրա հագուստը ծածանվում էր, եղեսպակը ծածանվում:

41 Մտածեցի. «Սպասի՛ր»: Ես ինձ կծեցի,— ասացի,— ես քնած չեմ: Ես եղեսպակից մի փոքրիկ ճյուղ կոտրեցի, գիտեք, և վերցրեցի բերանս որպես ատամփարիչ: Դրեցի բերանիս մեջ: Ես ետ նայեցի տան ուղղությամբ: Ասացի. «Ոչ, ես այնտեղ աղոթում էի հորս համար և Ինչ-որ

բան ասաց, որ ես դուրս գամ այստեղ, և ահա այստեղ կանգնած է այս Մարդը»:

42 Մտածեցի. «Տեր Հիսուսի տեսքն ունի»: Մտածեցի. «Հետաքրքիր է, Նա՞ է»: Նա նայում էր ճիշտ այն ուղղությամբ, որտեղ հիմա մեր տունն է կանգնած: Ես շրջվեցի *այս* կողմ, որ տեսնեմ, թե արդյոք կկարողանամ տեսնել Նրան: Եվ ես այդպես Նրա դեմքի մի մասը կարողացա տեսնել: Բայց Նա...Ես *այսպես* պետք է պտտվեի, որ տեսնեմ Նրան: Ես հազացի՝ Հմ-հմ: Տամարդը չշարժվեց: Մտածեցի. «Փորձեմ կանչել Նրան»: Եվ ես ասացի՝ Հիսո՛ւս: Եվ երբ Նա լսեց, *այդպես* շուռ եկավ: Դա է ամենը, ինչ ես հիշում եմ, Նա պարզապես պարզեց ձեռքերը:

43 Աշխարհում չկա մի նկարիչ, ով կկարողանար նկարել Նրա պատկերը, Նրա դիմագծերը: Լավագույնը, որ երբևէ տեսել եմ, դա Հոֆմանի *«Քրիստոսի դեմքը երեսուն երեք տարեկանում»* նկարն է: Այն իմ բոլոր գրականության և այն ամենի վրա է, ինչ ես օգտագործում եմ: Որովհետև շատ նման է...կամ որքան հնարավոր է բավականին մոտ է:

44 Նա նման էր Մարդու, եթե խոսեր երկրագունդի վերջը կգար, և այնուհանդերձ այնքան սիրով ու բարությամբ էր, որ դու, դու...Ես ուղղակի ընկա երեսիս վրա: Եվ արշալույսին, ես հայտնվեցի օրվա կեսին, երբ ուշքի եկա ննջազգեստի վերնաշապիկը թրջվել էր արցունքներից, ցախավելի և եղեսպակի դաշտով վերադարձա տուն:

45 Ես այդ մասին պատմեցի ծառայող ընկերոջս: Նա ասաց. — Բի՛լլի, դա քեզ խելքից կհանի,— ասաց,— դա սատանայից է,— ասաց,— կատակ մի արա այդպիսի բաների հետ: Այդ ժամանակ ես մկրտական ծառայող էի:

46 Ես գնացի իմ մեկ այլ հին ընկերոջ մոտ: Նստեցի և պատմեցի նրան Այդ մասին: Ես ասացի. — Ի՞նչ եք դու կարծում Այդ մասին:

47 — Լավ, Բիլլի, ես կասեմ քեզ իմ կարծիքը,— ասաց,— ես կարծում եմ, եթե դու ապրես անարատ կյանքով և ուղղակի քարոզես այն, ինչ գրված է այստեղ՝ Աստվածաշնչում՝ Աստծո շնորհքը և այլն, ես քո տեղը նման հեքիաթային բաներով չէի տարվի:

48 — Սը՛ր, ես չէի պատրաստվում տարվել հեքիաթային բաներով: Միակ բանը, որ ես փորձում եմ պարզել, այն է՝ թե դա ինչ է:

49 — Բի՛լլի, շատ տարիներ առաջ մարդիկ ունենում էին այդպիսի ապրումներ եկեղեցիներում: Բայց,— ասաց,— այդ բաները վերացան առաքյալների հետ,— նաև ասաց,— միակ բանը հիմա, որ մենք ունենք այդ... ցանկացած տեսակի նման բաներ տեսնելը,— ասաց,— դա ոգեհարցություն և դևերն են:

— Օ՜, եղբա՛յր Մակ Կիննի, դուք լո՞ւրջ եք ասում:

— Այո, պարոն:

— Ո՛վ Աստված, ողորմի՛ր ինձ,

50 — ասացի,— ես, ես...Ո՛հ, եղբայր Մակ Կիննի, դուք, դուք կմիանա՞ք ինձ հետ աղոթքով, որ Աստված թույլ չտա, որ դա կատարվի ինձ հետ: Դուք գիտեք, որ ես սիրում եմ Նրան և չեմ ուզում սխալվել այդպիսի բաներում, — ասացի,— աղոթեք ինձ հետ:

51 — Ես կաղոթեմ, եղբայր Բիլլի: Եվ այսպես մենք հենց այնտեղ՝ հովվի տանը, աղոթեցինք:

52 Ես այս հարցը տվել էի մի քանի ծառայողներին: Պատասխանը նույնն էր: Ես արդեն վախենում էի հարցնել նրանց, որովհետև նրանք կկարծեին, որ ես սատանա եմ: Ուստի ես, ես նման բան չէի ուզում դառնալ: Ես գիտեի, որ իմ սրտում ինչ-որ բան էր կատարվել: Հիմա, այդ ամենը, այնտեղ, այնտեղ՝ իմ սրտում ինչ-որ բան էր կատարվել: Եվ ես չէի ուզում այդպիսին լինել, երբեք:

53 Ուստի տարիներ անց ես մի օր լսեցի Առաջին Մկրտական եկեղեցում, որի անդամն էի այդ ժամանակ, թե ինչպես ինչ-որ մեկն ասում է. «Ասում եմ քեզ, պետք էր երեկ գնալ այնտեղ և լսել այդ սուրբ թռչկոտողներին»:

54 Ես մտածեցի. «Սուրբ թռչկոտողնե՞ր»: Իմ ընկեր՝ Ուոլթ Ջոնսոնը, բաս երգիչը, և ես ասացի. — Ո՛ւոլթ եղբայր, ի՞նչ էր դա:

— Այդ հիսունական խմբերից է:

— Ի՞նչ:

55 — Հիսունականներ են: Բի՛լլի, եթե միայն դա տեսնեիր,— ասաց,— նրանք այսպես էին թավալվում հատակին և ցատկում,— նաև ասաց,— նրանք ասում էին, որ եթե չես մոթմոթացել ինչ-որ անծանոթ լեզուներով, ուրեմն փրկված չես:

— Որտե՞ղ է դա գտնվում:

56 — Ո՛հ, ասաց,— փոքրիկ հին վրանային ժողով է Լուիսվիլլի մյուս կողմում: Իհարկե սևամորթ են:

— Ըհ՛ը։

— Այնտեղ սպիտապամորթներ էլ շատ կային։

— Նրանք էլ էին նույնը անո՞ւմ։

— Այո՛, այո՛։ Նրանք էլ էին դա անում։

57 — Տարօրինակ է։ Եվ մարդիկ խառնվո՞ւմ են այդպիսի բաների,— ասացի,— դե, ես կարծում եմ, որ մենք ուղղակի չենք կարող խուսափել դրանից։ Կիրակի առավոտյան էր, ես երբեք չեմ մոռանա այդ օրը։ Նա մի կտոր չոր նարինջի կճեպ էր ծամում՝ իր ստամոքսի մարսողականության համար, այն իմ աչքերի առաջ է, կարծես երեկ եղած լինի։ Մտածեցի. «Մրթմրթացնել, ցատկել, ինչ կրոնի է դա նման»։ Եվ ես, ես այսպես շարունակում էի։

58 Դրանից հետո հանդիպեցի Զոն Ռայեն անունով տարեց մի մարդու, ով հավանաբար հիմա այստեղ՝ եկեղեցում է, կամ էլ եղել է այստեղ՝ եկեղեցում։ Ես հանդիպեցի նրան...Երկար մորուքով ու մազերով տարեց տղամարդ էր, և նա հավանաբար այստեղ է։ Ես մտածեցի, որ նա այստեղից էր՝ Բենտոն Հարբորից, Դավթի Տնից։

59 Նրանք Լուիսվիլլում տեղ ունեին։ Ես փորձում էի գտնել այդ մարդկանց, նրանք իրենց անվանում էին Մարգարեների Դպրոց։ Այսպիսով մտածեցի, կգնամ այնտեղ և կտեսնեմ, թե ինչ է դա։ Ես չտեսա, որ որևէ մեկը թավալվի հատակով, բայց նրանք ինչ-որ տարօրինակ ուսմունքներ ունեին։ Եվ ահա այստեղ էր, որ ես հանդիպեցի այս մարդուն, նա ինձ հրավիրեց իրենց տուն։

60 Ես գնացի արձակուրդ։ Մի օր մնացի այնտեղ, հետո վերադարձա նրա տուն, բայց ինքը գնացել էր, գնացել էր ինչ-որ տեղ՝ Ինդիանապոլիսում։ — Տերը կանչել է իրեն,— նրա կինն ասաց։

— Դուք ուզում եք ասել, որ այդպես թույլ եք տալիս այդ մարդուն փախչել տնից։

61 — Ո՛հ, նա Աստծո ծառան է։ Լսել եմ, որ խեղճ ծեր կինը մի քանի շաբաթ առաջ է մահացել։ Նա նվիրված էր իր ամուսնուն։ Այդպիսի՞ կին պետք է ունենալ։ Դա ճիշտ է։ Ճիշտ է, թե սխալ, ամեն դեպքում նա իրավացի է։ Ես ասացի...Դե, ես գիտեի, որ նրանք...

62 Հիմա նա...Եղբա՛յր Ռայեն, դուք այստե՞ղ եք։ Նա այստեղ չէ։ Երեկ էր այստեղ, չէ՞, տղաներ։

63 Նրանք ապրում էին միայն նրանով, ինչ կարողանում էին հայթայթել, և նա տանն ուտելու ոչինչ չուներ: Դա ճիշտ է: Ես Միչիգանում լճից կամ լճակից մի քանի ձուկ բռնեցի և հետ վերադարձա և հետ վերադարձա այդ վայրը: Նրանք տանը նույնիսկ ճարպ կամ յուղ չունեին ձուկը պատրաստելու համար: Եվ ես ասացի. — Նա ձեզ թողել է տանը առանց որևէ բանի՞:

— Ո՛հ, բայց նա Աստծո ծառան է, եղբայր Բիլլ,— ասաց,— նա...

64 Ես մտածեցի. «Օրհնյալ լինի քո սիրտը: Եղբայր, ես կկանգնեմ ուղիղ քո կողքին»: Դա ճիշտ է: «Դու այդքան բարձր ես մտածում քո ամուսնու մասին, դրա համար ես պատրաստ եմ միանալ և կանգնել քո կողքին»: Դա ճիշտ է: Այսօր մեզ պետք են ավելի շատ նման կանայք, և ավելի շատ իրենց կանանց մասին այդպես մտածող տղամարդիկ: Դա ճիշտ է: Ամերիկան ավելի լավը կլիներ, եթե տղամարդիկ և կանայք այդպես միանային: Ճիշտ է, թե սխալ, մնացեք նրանց հետ: Այդ դեպքում բաժանումներն էլ այդքան շատ չէին լինի:

65 Այսպիսով մենք, մենք գնացինք...Հետո ես շարունակեցի ճանապարհս: Տուն դարձի ճանապարհին, ինչն էր տարօրինակ, անցա Միշավակայով: Եվ ես տեսա փոքրիկ, փոքրիկ հին մեքենաներ ճանապարհին կանգնած, որ կոչվում էին...մեծ ցուցանակներն ասում էին՝ «Միայն Հիսուս»: Ես մտածեցի. «Ի՞նչ է...«Միայն Հիսուս», դա պետք է, որ կրոնական լինի»: Ես մի քիչ էլ անցա և ահա այնտեղ էլ հեծանիվների վրա ամրացված էր՝ «Միայն Հիսուս»: Կադիլակները, «Տ» մոդելի «Ֆորդեր»-ը, ամեն ինչին ամրացված էր. «Միայն Հիսուս»: Ես մտածեցի. «Հետաքրքիր է, ի՞նչ է սա»:

66 Այսպիսով ես հետևեցի դրան, պարզվեց դա կրոնական հավաքույթ էր, այնտեղ մեկուկեսից մինչև երկու հազար մարդ կար: Ես լսում էի այդ բոլոր աղաղակներն ու թոկոտումները և այլն: Մտածեցի. «Լսի՛ր, ահա թե որտեղ ես կտեսնեմ, թե ինչ է նշանակում սուրբ թռչկոտողներ»:

67 Այսպիսով ես ունեի իմ հին Ֆորդը, գիտեք, որն ինչպես պնդում էի ժամում երեսուն մղոն է բացում. տասնհինգ *այս* կողմ, տասնհինգ վերև ու ներքև, *այ* այսպես: Այսպիսով ես այն քաշեցի մի կողմ, ես...երբ հասա կայանատեղի, և ոտքով հետ իջա: Մտա ներս, նայեցի շուրջը, բոլոր նրանք, ովքեր կարող էին կանգնել,

կանգնած էին: Ես ստիպված էի նայել գլուխների վերևից: Նրանք աղաղակում, ցատկում, ընկնում էին, և այսպես շարունակ: Ես մտածեցի. «Ո՛ւհ, այս ի՞նչ մարդիկ են»:

68 Բայց ինչքան ավելի երկար էի այնտեղ կանգնում, այնքան ավելի լավ էի ինձ զգում: Ես մտածեցի. «Այդքան էլ վատ չի թվում»: Մտածեցի. «Այս մարդկանց հետ ամեն ինչ կարգին է: Նրանք խելագար չեն»: Ինձ հաջողվեց խոսել նրանցից մի քանիսի հետ, նրանք, նրանք հրաշալի մարդիկ էին: Ես ասացի...

69 Դա այդ նույն հավաքույթն է, որից ես դուրս էի եկել և գիշերը անցկացրի քաղաքից դուրս և հաջորդ օրը նորից վերադարձա: Դուք լսել եք, թե ինչպես եմ ես պատմել այդ մասին իմ կյանքի պատմության մեջ: Բեմահարթակում ես կանգնած էի հարյուր հիսուն թե երկուհարյուր և գուցե ավելի ծառայողների հետ, և նրանք ուզում էին, որ բոլորն ուղղակի կանգնեն և ասեն, թե որտեղից ես իրենք: Ես էլ ասացի. — Ավետարանիչ Ուիլլիամ Բրանհամ, Ջեֆերսոնվիլ,— նստեցի,— մկրտական,— նստեցի: Ամեն մեկն ասում էր, թե որտեղից էր ինքը:

70 Հաջորդ առավոտ, երբ ես մտա այնտեղ...Այդ երեկո ողջ գիշերը քնեցի դաշտում, իսկ տաբատս տեղադրեցի Ֆորդի երկու նստարանների միջև, գիտեք, և ես, ես... հին զոլավոր տաբատը, վերնաշապիկը, գիտեք: Հաջորդ առավոտ գնացի հավաքույթի այդ վերնաշապիկով: Գնացի...

71 Ինձ մոտ ընդամենը երեք դոլար էր, և ես պետք է վառելիք գնեի տուն հասնելու համար: Բացի այդ, ես, ես մի քանի հնացած բլիթներ գնեցի ինձ համար, գիտեք, բայց ես լավ էի: Գնացի ծորակի մոտ, մի բաժակ ջուր լցրեցի ինձ համար, գիտեք, և այն բավականին լավն էր: Ես մի քիչ խոնավեցրի դրանք և նախաճաշեցի:

72 Ես կարող էի իրենց հետ ուտել, նրանք օրը երկու անգամ սնվում էին: Բայց ես ոչինչ չէի կարող գցել զոհաբերության արկղը, դրա համար չէի ուզում լինել ձրիակեր:

73 Հետո ես, հետո ես այդ առավոտ մտա այնտեղ, նրանք ասացին...Ես ուղղակի այս մասը պետք է պատմեմ: Այդ առավոտ մտա այնտեղ և նրանք ասացին. — Մենք փնտրում ենք Ուիլլիամ Բրանհամին, երեկ երեկոյան երիտասարդ ավետարանիչը՝ մկրտական, հարթակի վրա էր, ասացին,— մենք ցանկանում ենք, որ նա մեզ պատգամ

տա այս առավոտ։ Ես տեսա, որ այդ մարդիկ կանգ չեն առնի, մինչև բեմ չհանեն ինձ՝ մկրտականիս։ Դրա համար ես կուչ եկա նստարանին։ Հագիս զոլավոր տաբատ ու վերնաշապիկ էր, մենք, գիտեք, քահանայական հագուստ չէինք կրում, դրա համար…Ես այսպես սեղմվեցի աթոռին։ Նա երկու թե երեք անգամ հարցրեց։ Ես նստած էի մի սևամորթ եղբոր կողքին։

74 Պատճառը, թե ինչու էին նրանք իրենց համաժողովն անցկացնում հյուսիսում այն է, որ այդ ժամանակ հարավում խտրականություն էր տիրում։ Դրա համար չէին կարող անցկացնել այն Հարավում։

75 Ինձ հետաքրքիր էր «Միայն Հիսուս» ինչի մասին էր։ Եվ ես մտածեցի. «Քանի դեռ դա Հիսուս է, ամեն ինչ կարգին է։ Դրա համար տարբերություն չկա, թե արդյոք այն…ինչպես է այն, պարզապես քանի դեռ դա Նա է»։

76 Այսպիսով ես մի քիչ նստեցի այնտեղ և հետևեցի նրանց, նրանք ևս երկու թե երեք անգամ էլ կանչեցին։ Այս սևամորթ եղբայրն նայեց ինձ և ասաց. — Դուք ճանաչո՞ւմ եք նրան։ Ես…ես…ես…Դա լրիվ մերկացում էր։ Ես չէի կարող ստել այդ մադուն, չէի ուզում ստել։

— Նայի՛ր, եղբայր։ Այո, ես ճանաչում եմ նրան։

— Այդ դեպքում բեր նրան այստեղ։

77 — Լավ, ես, ես կասեմ քեզ, եղբայր,— ասացի ես,— դա ես եմ։ Բայց տեսնում ես,— ասացի ես,— նայիր, ես…այս զոլավոր տաբատով։

— Բարձրացիր այնտեղ։

78 — Ոչ, ես չեմ կարող բարձրանալ այնտեղ,— ասացի ես,— այսպես այս տաբատով և այս վերնաշապիկով։

— Այդ մարդկանց հետաքրքիր չէ, թե դու ինչպես ես հագնված։

79 — Նայի՛ր, չասես։ Լսո՞ւմ ես։ Տե՛ս, ես այս զոլավոր տաբատով եմ, ես չեմ ուզում գնալ այդտեղ։

Ասվեց. — Ինչ-որ մեկը գիտի՞, թե որտեղ է Ուիլլիամ Բրանհամը։

Նա ասաց. — Նա այստե՛ղ է։ Նա այստե՛ղ է։

80 Ո՛հ, Աստված իմ։ Դեմքս կարմրել էր, գիտեք, առանց փողկապի, գիտեք, այս հին վերնաշապիկով և այսպիսի տաբատով։ Ես քայլելով բարձրանում էի այնտեղ, ականջներս վառվում էին։ Ես երբեք չէի կանգնել լսափողի առջև։

81 Այսպիսով ես բարձրացա այնտեղ՝ քարոզելու, և թեման վերցրեցի, երբեք չեմ մոռանա դա՝ «Հարուստն իր աչքերը բարձրացրեց դժոխքում և աղաղակեց»: Ես հաճախակի եմ քարոզում այդպիսի փոքրիկ երեք թեմաներ՝ «Եկե՛ք տեսեք մի մարդու», «Հավատո՞ւմ ես սրան» կամ «Այդ ժամանակ նա աղաղակեց»: Եվ ես ասում էի. — Այնտեղ ծաղիկներ չկային, և այդ ժամանակ նա աղաղակեց: Այնտեղ աղոթքի ժողովներ չկային, այդ ժամանակ նա աղաղակեց: Այնտեղ երեխաներ չկային, այդ ժամանակ, նա աղաղակեց: Երգեր չկային, և այդ ժամանակ նա աղաղակեց: Հետո ես աղաղակեցի:

82 Ամեն բան ավարտվելուց հետո, ոհ, նրանք պարզապես...բոլորն իմ շուրջը՝ ցանկանալով, որ ես գնամ և հավաքույթ անցկացնեմ իրենց մոտ: Ես մտածեցի. «Լսի՛ր, գուցե ես էլ եմ սուրբ թռչկոտող»: Հասկանո՞ւմ եք: Դրա համար մտածեցի. «Գուցե...»: Տեսնում եք, նրանք այնքան հրաշալի մարդիկ էին:

83 Ես դուրս եկա այնտեղից: Մի տղամարդ կովբոյական երկարաճիթ կոշիկներով և մեծ կովբոյական գլխարկով, ես ասացի. — Դուք ո՞վ եք:

— Ես ավագ *այսինչն եմ,* Տեքսասից:

Մտածեցի. «Դա նման էր...»:

84 Մեկ այլ տղամարդ մոտեցավ այս վանդակավոր անդրավարտիկով, գիտեք, ինչպիսին հագնում են գոլֆ խաղացողները, և բրդյա սվիտրով: Ասաց. — Ես պատվելի *այսինչ, այնինչն եմ,* Ֆլորիդայից: Չէի՞ք գա անցկացնելու...

85 Ես մտածեցի. «Ես ոնց որ տանը լինեմ, բարեկամ, այս զոլավոր տաբատով և վերնաշապիկով: Դա ուղղակի հրաշալի է»:

86 Դուք լսել եք իմ կյանքի պատմությունն այս բաների վերաբերյալ, դրա համար ես կանգ կառնեմ այստեղ և մի բան կպատմեմ ձեզ, որը նախկինում երբեք չեմ պատմել: Նախ ուզում եմ ձեզ խնդրել...Ես պատրաստվում էի բաց թողնել դա: Կյանքում սա հրապարակավ երբեք չեմ ասել: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը, եթե խոսք եք տալիս, որ կսիրեք ինձ և սա ասելուց հետո կփորձեք սիրել ինձ նույնքան, որքան և առաջ: Շատ լավ: Դա ձեր խոստումն էր, պահեք այն:

87 Այդ երեկո հավաքույթին նստած, երբ նրանք երգում էին իրենց երգերը՝ ծափ էին տալիս: Նրանք երգում էին՝

«Ես…»: Այդ փոքրիկ երգը. «Ես գիտեմ, որ դա Արյուն էր: Ես գիտեմ, որ դա Արյուն էր»: Եվ շարքերի միջով վազում էին և այլն, աղաղակում և փառաբանում էին Տիրոջը: Ես մտածեցի. «Ինձ համար դա շատ լավ է հնչում»: Ես սկսեցի…

88 Նրանք անընդհատ վկայակոչում էին Գործք Առաքելոցը՝ Գործք 2:4, Գործք 2:38, Գործք 10:49 համարները: Մտածեցի. «Լսի՛ր, սա Սուրբ Գրքի համաձայն է: Ես պարզապես նախկինում երբեք Դա այդպես չեմ տեսել»: Բայց, ո՞հ, սիրտս այրվում էր, մտածեցի. «Սա հրաշալի է»: Երբ ես առաջին անգամ հանդիպեցի նրանց, մտածում էի, թե «սուրբ թռչկոտողների» խումբ են, և մտածում էի. «Ո՞հ, Աստված իմ: Հիմա նրանք հրեշտակների խումբ են»: Տեսնում եք, ես արագ փոխեցի կարծիքս:

89 Այսպիսով հաջորդ առավոտ, երբ Տերն ինձ տվեց այդ մեծ հնարավորությունը այդ ժողովներն անցկացնելու, ես մտածեցի. «Ո՞հ, Աստված իմ, ես կգնամ այս խմբի հետ: Նրանք պետք է, որ նրանցից լինեն, ում «աղաղակող մեթոդիստներ» են անվանում: Ուղղակի մի քիչ առաջ են գնացել»: Մտածեցի. «Գուցե դա հենց սա է»: Ես մտածեցի. «Դե, ես…Ինձ հաստատ դա դուր է գալիս: Մի բան կա նրանց մեջ, որ ինձ դուր է գալիս՝ նրանք խոնարհ ու հաճելի են»:

90 Մի բան, որ չէի կարողանում հասկանալ՝ դա լեզուներով խոսելն էր, դա ինձ հետաքրքրեց: Եվ ես…Մի տղամարդ կար, ասենք օրինակի համար, նստած *այստեղ,* իսկ մյուսը՝ *այնտեղ,* և նրանք խմբի առաջնորդներ էին: *Այս* մեկը կանգնեց և խոսեց լեզուներով, *այն* երկրորդը թարգմանեց դա և ասում էր բաներ կապված հավաքույթի մասին և այլն: Ես մտածեցի. «Ո՞հ, ա՜խ, ես պետք է դա պարզեմ»: Հետո հակառակը՝ իջնում էր *սրա* վրա և հետո նորից *այդ* մարդու վրա. և ամեն մեկը խոսում էր լեզուներով և մեկնաբանում: Եկեղեցու մնացած մասն էլ էր խոսում, բայց, թվում էր թե մեկնաբանությունը այս երկու մարդկանց նման չէր գալիս: Տեսնելով, որ նրանք նստած են իրար կողքի, մտածեցի. «Ո՞հ, Աստված իմ, նրանք պետք է որ հրեշտակներ լինեն»: Ասպիսով մինչ նստած էի այնտեղ՝ հետևում…

91 Ինչ էլ որ դա լիներ (հասկանում եք), ես չէի կարող դա հասկանալ: Այն իջնում էր ինձ վրա: Դուք գիտեք, որ ես իրադարձություններն իմանալու միջոց ունեմ, եթե Տերը

կամենում է, որ ես դա իմանամ: Եվ ես չ...Դրա համար եմ ասում, որ նախկինում երբեք չեմ ասել սա հանրության առջև: Եթե ես իրոք ուզում եմ որևէ բան իմանալ, Տերը սովորաբար հայտնում է ինձ այդ բանի մասին: Դրա համար է այս պարգևը, հասկանում եք: Այսպիսով դու չես կարող դա նետել մարդկանց առջև, դա նման է դառնում մարգարիտները խոզերի առջև գցելուն: Սա երկյուղալի, սուրբ բան է, և չես ուզում դա անել: Աստված ինձանից կպահանջի: Ինչպես եղբայրների հետ խոսելը և այլն, ես չէի փորձի որևէ վատ բան պարզել եղբոր մասին:

92 Մի անգամ մի եղբոր հետ սեղանի շուրջ նստած, ինձ գրկելով ասաց. — Օ՜, Բրանհա՛մ եղբայր, ես սիրում եմ քեզ: Իսկ ես շարունակ զգում էի, որ ինչ-որ բան շարժվում է: Նայեցի նրան: Նա ինձ չէր ասի այդ մասին, ես գիտեի, որ նա չի սիրում ինձ, հասկանում եք, որովհետև դա այդպես էր: Նա կատարյալ երկերեսանի էր, որ երբևէ եղել է, և հենց այնտեղ փաթաթվել էր ինձ:

93 Ես ասացի՝ լավ, և հեռացա: Ես չեմ ուզում դա իմանալ: Ես կնախընտրեի ճանաչել նրան այնպիսին, ինչպիսին ճանաչում եմ՝ որպես իմ եղբայր, և թողնեի դա այդպես: Մնացածը թող Տերն անի: Հասկանո՞ւմ եք: Ես չեմ ուզում...չգիտեմ, չեմ ուզում այդ բաներն իմանալ:

94 Շատ ժամանակ այդ բաների վերաբերալ նույնիսկ ոչ այստեղ՝ եկեղեցում: Լինում է նստած եմ սենյակում, ռեստորանում և Սուրբ Հոգին հայտնում է ինձ իրադարձությունների մասին, որոնք կատարվելու են: Հենց այստեղ կան մարդիկ, ովքեր գիտեն որ դա ճշմարտություն է: Լինում է նստած եմ տանը և ասում եմ. «Ուշադիր եղիր հիմա, որոշ ժամանակ անց մեքենա է գալու: Դա *այսինչ, այնինչ* մարդն է լինելու: Ներս բեր նրանց, որովհետև Տերն է ասել, որ այստեղ են լինելու»: «Երբ մենք իջնենք փողոցով, *որոշ* բաներ են կատարվելու: Այդ անցման ժամանակ զգույշ եղիր, որովհետև մեքենան քիչ է մնալու քեզ հարվածի»: Եվ պարզապես տեսեք, թե արդյոք այն չի կատարվելու այդպես: Ամեն անգամ ուղղակի կատարյա՛լ է: Դրա համար չես ուզում չափից դուրս ընկղմվել դրա մեջ, որովհետև...Դա, դա...Այն կարող ես օգտագործել, դա Աստծո պարգևն է, բայց պետք է տեսնես, թե ինչ ես անում դրա հետ: Աստված քեզանից կպահանջի:

95 Նայե՛ք Մովսեսին: Մովսեսը Աստծուց ուղարկված մարդ էր: Դուք հավատո՞ւմ եք դրան: Նախասահմանեց,

կանխասահմանեց և մարգարե դարձրեց։ Եվ Աստված ուղարկեց նրան այնտեղ և ասաց. «Գնա խոսիր ժայռի հետ», հարվածելուց հետո։ Ասաց. «Գնա խոսիր ժայռի հետ, և նա կբխեցնի իր ջրերը»։

96 Բայց Մովսեսը զայրացած գնաց այնտեղ և հարվածեց ժայռին։ Ջուրը չեկավ, նորից հարվածեց, ասաց. — Ո՛վ ապստամբներ. մենք պիտի այս ապառաժի՞ց ջուր հանենք ձեզ համար։

97 Տեսնո՞ւմ եք, թե ինչ արեց Աստված։ Ջուրը հոսեց, բայց ասաց. — Ե՛կ այստեղ, Մովսե՛ս։ Դա վերջն էր, հասկանում եք։ Պետք է հետևեք այդ բաներին, որպեսզի…թե դուք ինչ եք անում աստվածային պարգևների հետ։

98 Ճիշտ ինչպես քարոզիչը՝ լավ հզոր քարոզիչը, որ գնում քարոզում է միայն ողորմություններ և փող հավաքելու համար, Աստված պահանջելու է դա նրանից։ Դա ճիշտ է։ Պետք է տեսնեք, թե ինչ եք անում աստվածային պարգևների հետ։ Եվ, կամ փորձել ինչ–որ մեծ հեղինակություն կամ մեծ անուն ստեղծել ինչ–որ եկեղեցու կամ ձեզ համար։ Ավելի լավ է ես երկու կամ երեք գիշերային հավաքույթներ ունենամ և էլի ինչ որ տեղում, և համեստ ու խոնարհ մնամ։ Դուք գիտեք, ես ինչ նկատի ունեմ։ Այո՛, պարոն, միշտ պահեք այն ձեր տեղը, որտեղ Աստված կարող է դնել Իր ձեռքը ձեր վրա։

Հիշե՛ք, հիմա սա ներքին Կյանք է։

99 Այսպիսով հետո այդ օրը ես մտածեցի. «Ես կգնամ»։ Եվ ես այնքան տագնապած էի այդ մարդկանց համար, մտածեցի. «Ես ամեն ինչ կպարզեմ այդ մարդկանց մասին»։ Ծառայությունն ավարտվելուց հետո ես շարունակում էի բակում փնտրել նրանց։ Նայեցի շուրջս։ Գտա նրանցից մեկին, ասացի. — Բարև ձեզ, սըր։

100 — Բարև,— ասաց,— դո՞ւ չես, արդյոք, այն երիտասարդը, որը քարոզում էր այս առավոտ։

Ես ասացի…Ես այդ ժամանակ քսաներեք տարեկան էի։ Ասացի. — Այո, պարոն։

—Ի՞նչ էր քո անունը։

— Բրանհամ,— ասացի,— իսկ ձե՞ղը։

101 Եվ նա ինձ ասաց իր անունը։ Ես մտածեցի. «Եթե միայն կարողանայի հաղորդակցության մեջ մտնել հիմա նրա հոգու հետ»։ Ես դեռ չգիտեի, թե ինչից էր դա տեղի

ունենում: — Դե, ասենք, պարոն,— ասացի ես,— դուք այստեղ ունեք մի Բան, որը ես չունեմ:

— Դու ստացե՞լ ես Սուրբ Հոգին, երբ որ հավատացել ես:

— Դե, ես մկրտական եմ:

102 — Բայց դու ստացե՞լ ես Սուրբ Հոգին, երբ որ հավատացել ես:

103 — Եղբա՛յր, ի՞նչ նկստի ունեք,— ասացի,— ես, ես չունեմ այն, ինչ դուք բոլորդ ունեք, ես դա գիտեմ: Որովհետև դուք ունեք մի Բան, որը հզոր է թվում և այնքան...

— Դու երբևիցէ խոսե՞լ ես լեզուներով:

— Ոչ, պարոն:

— Ես կարող եմ միանգամից քեզ ասել. դու չունես Սուրբ Հոգին:

104 — Դե, եթե ես...եթե դա է պետք անել, որպեսզի Սուրբ Հոգին ստանամ, ապա ես Դա չունեմ:

105 — Դե եթե դու չես խոսացել լեզուներով, ուրեմն չունես Այն:

106 Շարունակելով նրա հետ զրույցն այդպես, ես ասացի. — Իսկ որտեղի՞ց կարող եմ Այն ստանալ:

107 — Մտիր սենյակ՝ այնտեղ և սկսիր փնտրել Սուրբ Հոգուն:

108 Ես շարունակում էի հետևել նրան, գիտեք: Նա չգիտեր, թե ինչ էի անում, բայց նա...ես գիտեի, որ նա տարօրինակ զգացողություն ուներ, որովհետև նա...նրա աչքերը սկսում էին մի փոքր սառել, երբ նա նայում էր ինձ: Եվ նա...Բայց նա իսկական քրիստոնյա էր: Նա բացարձակապես հարյուր տոկոսանոց քրիստոնյա էր: Դա ճիշտ է: Ես մտածեցի. «Փառք Աստուն, ահա Այն: Ես, ես մի ձևով պետք է հասնեմ այդ խորանին»:

109 Դուրս եկա, նայեցի չորս կողմը, մտածեցի. «Ես կգտնեմ մյուս մարդուն»: Եվ երբ ես գտա նրան և սկսեցի խոսել իր հետ, ասացի. — Բարև ձեզ, սըր:

110 — Դու ո՞ր եկեղեցուն ես պատկանում,— ասաց նա,— ինձ ասացին, որ դու մկրտական ես:

— Այո:

— Դու դեռ չես ստացել Սուրբ Հոգին, այդպես չէ՞:

— Դե, ես չգիտեմ:

— Դու երբևիցէ խոսե՞լ ես լեզուներով։

— Ո՛չ, պարոն։

— Ուրեմն դու չես ստացել Այն։

111 — Ես գիտեմ, որ չունեմ այն, ինչ դուք բոլորդ ունեք։ Ես դա գիտեմ։ Բայց, եղբայրս, ես իրոք ուզում եմ Դա։

— Ձրավազանն այնտեղ, այնտեղ պատրաստ է։

112 — Ես մկտրված եմ։ Բայց,— ասացի,— ես, ես չեմ ստացել այն, ինչ դուք բոլորդ ունեք,— ասացի,— դուք ունեք մի բան, որը ես, ես շատ եմ ուզում։

— Դե, դա հիանալի է։

113 Ես փորձում էի բռնել նրան, հասկանում եք։ Եվ եթե ես…Երբ ես վերջապես բռնեցի նրա հոգին, դա բոլորովին ուրիշ մարդ էր, եթե ես երբևէ խոսացել եմ որևէ մի ստոր կեղծավորի հետ, ապա նա նրանցից մեկը էր։ Նա ապրում էր…Նրա կինը սևահեր էր, իսկ ինքը ապրում էր շիկահերի հետ և նրանից երկու երեխա ուներ։ Խմում, հայհոյում, վազում էր գինետներ և նման բաներ, և չնայած դրան նստում էր այնտեղ, խոսում էր լեզուներով և մարգարեանում։

114 Այդ ժամանակ ես ասացի. «Տե՛ր, ների՛ր ինձ»։ Գնացի տուն։ Դա ճիշտ է։ Ես ասացի. «Ես պարզապես…Ես չեմ հասկանում դա։ Թվում էր, թե օրհնյալ Սուրբ Հոգին իջնում է նաև այդպիսի կեղծավորի վրա»։ Ես ասացի. «Դա անհնար է. և վերջ»։

115 Այդ երկար ժամանակվա ընթացքում ես ուսումնասիրում և աղաղակում էի, մտածելով, որ եթե կարողանայի դուրս գալ նրանց հետ, գուցե կարողանայի պարզել, թե ինչում է բանը։ Ահա մեկը իսկական քրիստոնյա է, իսկ մյուսը՝ իսկական կեղծավոր։ Այդ ժամանակ ես մտածեցի. «Ինչպե՞ս է դա հնարավոր։ Ո՛հ»։ Ես ասացի. «Ո՞վ Աստված, գուցե, գուցե ինչ–որ բան կարգին չէ ինձ հետ»։ Եվ ես ասացի, լինելով ֆունդամենտալիստ. «Դա…պետք է դա տեսնեմ Աստվածաշնչում։ Պետք է տեսնեմ»։

116 Ինձ համար, ամեն ինչ, ինչ որ գործում է պետք է դուրս գա այս Աստվածաշնչից, այլապես դա ճիշտ է։ Այն պետք է այստեղից դուրս գա։ Դա կարող է ապացուցվել Աստվածաշնչում, ոչ միայն մի տեղում, այլ այն պետք է հոսի ամբողջ Սուրբ Գրքով։ Ես պետք է հավատամ դրան։ Այն պետք է համաձուլվի և կապակցվի սուրբգրային

ամեն մի համարի հետ, հակառակ դեպքում ես դրան չեմ հավատում: Եվ հետո, որովհետև Պողոսն էլ է ասում. «Եթե երկնքից մի հրեշտակ գա և ուրիշ բան ավետարանի, թող անիծյալ լինի»: Դրա համար ես հավատում եմ Սուրբ Գրքին:

Ես ասացի. «Աստվածաշնչում ես երբեք նման բան չեմ տեսել»:

117 Երկու տարի անց կնոջս և ամեն բան կորցնելուց հետո, ես կանաչ ջրաղացի մոտ էի, իմ փոքրիկ տեղում, աղոթում էի: Երկու թե երեք օրով, երկու օրով վերադարձել էի իմ քարանձավ: Դուրս եկա մի փոքր շնչելու, օդ շնչելու: Եվ երբ դուրս եկա, Աստվածաշունչս դրված էր գերանի ծայրին հենց մուտքի մոտ: Քամուց հին ծառը ընկել էր, վրան ճյուղավորվածություն կար: Հիմա, դուք...Ճյուղավորվածությունն *այսպես* դեպի վեր էր խոյացած, իսկ ծառը ընկած էր գետնին: Ես պարզապես թամբում եմ այդ ծառին, գիշերը պառկում եմ այնտեղ և այդպես նայում եմ երկնքին, ձեռքս դնում եմ *այսպես,* և երբեմն այդպես էլ աղոթելով քնում եմ գերանին: Եղել է, որ մի քանի օր այնտեղ առանց հացի ու ջրի պարզապես աղոթել եմ: Ես դուրս եկա այդ քարանձավից մի փոքր թարմ օդ շնչելու, ներսում զով ու խոնավ էր:

118 Այսպիսով ես դուրս եկա, Աստվածաշունչս այնտեղ էր, որտեղ նախորդ օրն էի թողել, և այն բացված էր Եբրայեցիս թղթի 6-րդ գլխի վրա: Եվ այնտեղ սկսեցի կարդալ. «Թողնենք...գանք կատարյալին՝ առանց կրկին հիմք դնելու մեռած գործերից ապաշխարելուն և Աստծուն հավատալուն» և այլն: «Որովհետև անկարելի է նրանց, ովքեր մի անգամ լուսավորվել են, այն երկնային պարգևի և կոչումների համն առել են» և այլն: Բայց ասում է. «Սակայն փուշն ու տատասկը, որը ենթակա է մերժման, որի վերջը...ջուրը...անձրևն իջնում է երկիր վրա, որ ջրի այն և պատրաստի նրանց համար, ովքեր, ովքեր ենթակա են մերժման փշերի և տատասկների հետ միասին, որոնց վերջն այրվելն է»:

Եվ Ինչ-որ բան անցավ՝ «Խ-շ-շ-շ-շ»:

119 Ես մտածեցի. «Ահա Այն: Ես հիմա կլսեմ, ինչ էլ որ Նա...Նա արթնացրեց ինձ այստեղ, Նա հիմա ինձ տեսիլք է տալու»: Ես սպասում ու սպասում էի գերանի այդ ծայրին: Վեր կացա և հետ ու առաջ էի քայլում, վերև ու ներքև: Հետ գնացի, ոչինչ չկատարվեց: Նորից հետ գնացի դեպի

իմ քարանձավը, դարձյալ ոչինչ կտատարվեց։ Կանգնեցի այնտեղ, մտածեցի. «Ի՞նչ է սա»։

120 Նորից մոտեցա Աստվածաշնչիս, և, ո՛հ, Այն նորից եկավ ինձ վրա։ Վերցրեցի ձեռքս, մտածեցի. «Ի՞նչ է Նա ուզում, որ ես կարդամ այնտեղ»։ Ես շարունակեցի ներքևում կարդալ «Աստծո հանդեպ ապաշխարության և հավատքի» մասին և այլն, և կարդացի մինչև այնտեղ, որտեղ ասվում է. «Անձրևն իջնում է երկրի վրա, որ մշակի և պատրաստի այն նրանց համար, որ նախատեսված են այստեղ, բայց փշերն ու տատասկները, ովքեր մոտ են մերժմանը, նրանց վերջը այրվելն է»։ Եվ, ո՛հ, դա ինձ ուղղակի ցնցեց։

121 Ես մտածեցի. «Տե՛ր, արդյոք Դու պատրաստվո՞ւմ ես ինձ տեսիլք տալ այն մասին, որ...»։ Ես գնացել էի այնտեղ Իրենից այլ բան խնդրեու։

122 Մեկ էլ հանկարծ իմ առջև պտտվող Երկրագունդը տեսա, և այն ամբողջությամբ վարած էր։ Եվ ահա մի մարդ անցավ սպիտակ հագուստով, գլուխը վեր՝ այսպես Սերմեր ցանելով։ Եվ երբ նա գնաց, անցնելով, հենց որ նա անցավ բլրի մյուս կողմը, ահա իր հետևից մի մարդ եկավ՝ մուգ հագուստով, գլուխն իջեցրած ներքև, սերմեր ցանելով։ Եվ երբ բարի Սերմերը ծլեցին, պարզվեց, որ դա ցորեն է, իսկ երբ չար սերմերը ծլեցին՝ դա որոմ էր։

123 Հետո մեծ երաշտ եղավ երկրի վրա, և ցորենը կախեց իր գլուխը, չորանալու վրա էր, փափագելով ջրին։ Եվ տեսա, թե ինչպես բոլոր մարդիկ բարձրացրաց ձեռքերով աղոթում էին Աստծուն, որ անձրև ուղարկի։ Այնուհետև տեսա որոմը, խոնարհել իր գլուխը, ջուր խնդրելով։ Եվ հենց այդ ժամանակ մեծ ամպերը հայտնվեցին և անձրևը հորդաց։ Եվ երբ այն հորդաց, ցորենը, որն ամբողջութկամբ խոնարհվել էր «Ծ-շ-շ-շ» ուղղվեց։ Որոմը նույնպես անմիջապես նրա կողքին «Ծ-շ-շ-շ» ուղղեց իր ցողունը։

Ես մտածեցի. «Ի՞նչ է դա»։

124 Հետո դա հասավ ինձ։ Ահա այն։ Նույն անձրևը, որ աճեցնում է ցորենը, աճեցնում է նաև մոլախոտը։ Եվ նույն Սուրբ Հոգին կարող է իջնել մարդկանց խմբի վրա, և կարող է օրհնել կեղծավորին նույն ձևով, ինչպես օրհնում է մյուսներին։ Հիսուսն ասաց. *«Իրենց պտուղներից կճանաչեք նրանց»։* Ոչ թե որ նա աղաղակում կամ ուրախանում է, այլ՝ «իր պտուղներից կճանաչեք նրան»։

125 Ես ասացի. «Ահա՛ թե ինչ: Ես դա հասկացա, Տե՛ր»: Ես ասացի. «Ուրեմն դա իսկապես Ճշմարտություն է»: Այս մարդը...Դուք կարող եք պարգև ունենալ առանց Աստծուն ճանաչելու:

126 Հետո ես, հետո ես սկսեցի չափազանց քննադատաբար մոտենալ լեզուներով խոսելուն, հասկանում եք: Բայց մի օր, հետո, ինչպե՞ս Աստված հաստատեց դա ինձ համար:

127 Ես մկրտում էի գետում, իմ առաջին դարձի եկածներին, Օհայո գետում, և տասնյոթերորդ մարդուն էի մկտրում, երբ սկսեցի մկրտել նրան ասացի. «Հա՛յր, երբ ես մկրտեմ նրան ջրով, Դու մկրտիր նրան Սուրբ Հոգով»: Ես սկսեցի ընկղմել նրան ջրի մեջ:

128 Եվ հենց այդ ժամանակ երկնքից մի պտտահողմ եկավ, և ահա այդ Լույսը եկավ՝ փայլելով: Ափին հարյուրավոր մարդիկ կային, հունիս ամիսն էր, ցերեկվա ուղիղ ժամը երկուսը: Եվ Այն կախվեց հենց այնտեղ, որտեղ կանգնած էի ես: Այնտեղից մի Ձայն հնչեց՝ ասելով. «Ինչպես Հովհաննես Մկրտիչն ուղարկվեց ազդարարելու համար Քրիստոսի առաջին գալուստը, այնպես էլ դու...կունենաս մի պատգամ, որը կազդարարի Քրիստոսի երկրորդ գալուստը»: Դա մահու չափ վախցրեց ինձ:

129 Եվ ես հետ գնացի, և բոլոր մարդիկ այնտեղ՝ ծուլողներ և բոլորը, դեղագործը և բոլորը ափին: Այդ օրը ես մոտ երկու թե երեք հարյուր մարդ էի մկրտել: Եվ երբ ինձ դուրս հանեցին, ջրից հանեցին, սարկավագները և մնացածները մոտեցան և հարցրեցին. — Ի՞նչ էր նշանակում այդ Լույսը:

130 Սևամորթ մարդկանց մի մեծ խումբ՝ «Gilt Edge Baptist» և «Lone Star» եկեղեցուց շատերն այնտեղ էին, նրանք սկսեցին գոռալ երբ տեսան, որ այդ բանը կատարվում է, մարդիկ ուշաթափ էին լինում:

131 Ես փորձեցի այնտեղ լողազգեստով նստած մի աղջկա դուրս բերել նավակից, կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի էր եկեղեցում, ասացի. — Մարջի՛, դուրս չե՞ս գա նավակից:

— Բիլլի, ես պարտավոր չեմ դուրս գալ:

132 — Ճիշտ է, դու պարտավոր չես, բայց ես բավականաչափ հարգանք կունենայի Ավետարանի նկատմամբ՝ դուրս գալու համար այնտեղից, որտեղ ես մկրտում եմ:

— Ես պարտավոր չեմ:

133 Եվ երբ նա նստած էր այնտեղ քրքջալով և ծիծաղելով ինձ վրա մկրտելիս, որովհետև չէր հավատում ջրի մկրտությանը, հենց այդ ժամանակ, երբ Տիրոջ Հրեշտակն իջավ նա երեսի վրա ընկավ նավակի մեջ: Այսօր այդ աղջիկը հոգեբուժարանում է: Աստծո հետ խաղ անել չես կարող: Հասկանո՞ւմ եք: Հիմա, ավելի ուշ...Գեղեցիկ աղջիկ, ավելի ուշ սկսեց խմել, շշով հարվածել էին նրան, գարեջրի շշով, ու ամբողջ դեպքը պատռել էին: Ո՛հ, ահավոր տեսք ուներ: Եվ դա այնտեղ կատարվեց:

134 Այնուհետև ողջ կյանքիս ընթացքում ես տեսնում էի դա, տեսնում էի այդ շարժումը, այդ տեսիլքները, թե ինչպես են այդ բաները կատարվելու: Հետո, շատ չանցած դա այնքան էր շարունակում անհանգստացնել ինձ, բոլորն ասում էին, որ Դա սխալ է: Եվ ես առանձրացա իմ ամայի վայրը, որտեղ միշտ աղոթում էի: Եվ ես... Կարևոր չէ, թե որքան էի շարունակում աղոթել դրա համար, որ հեռանա ինձանից, Այն ամեն դեպքում գալիս է: Այսպիսով ես պարզապես...Ես...ես որսի պահպանման տեսուչ էի Ինդիանա նահանգում: Ես ներս մտա, այնտեղ մի մարդ էր նստած, խորանի իմ դաշնակահարի եղբայրն էր: Եվ նա ասաց. — Բիլլի, դու կարո՞ղ ես այսօր ցերեկը ինձ հետ Մեդիսոն գալ:

— Չեմ կարող, որովհետև անտառ պետք է գնամ:

135 Եվ ես...ուղղակի պտտվում էի տան շուրջ՝ հանելով գոտիս, զենքի գոտիս և այլ իրեր՝ թևքերս վեր քաշելով: Մենք ապրում էինք մի փոքրիկ երկսենյականոց տան մեջ: Ես պատրաստվում էի լվացվել և ճաշել: Լվացվեցի և պարզապես քայլում էի տան կողքով, մեծ թխկենու ծառի տակով, և հանկարծ ինչ-որ Բան անցավ՝ «Խ-շ-շ-շ-շ-շ»: Քիչ էր մնում, որ ուշաթափվեի: Ես նայեցի, գիտեի, որ կրկին Դա էր:

136 Նստեցի աստիճաններին: Նա դուրս թռավ մեքենայից և վազեց դեպի ինձ և ասաց. — Բի՛լլի, քեզ լավ չե՞ս զգում:

— Ո՛չ, պարոն:

— Ի՞նչ է պատահել, Բի՛լլի:

137 — Չգիտեմ,— ասացի,— ուշադրություն մի՛ դարձրու, եղբա՛յր, ամեն ինչ կարգին է: Ծնորհակալություն:

138 Կինս դուրս եկավ և մի կուժ ջուր բերեց, ասաց. — Սիրելի՛ս, ինչ է պատահել:

— Ոչի՛նչ, սիրելի՛ս:

139 — Արի՛, ճաշը պատրաստ է,— ասաց նա, մի ձեռքով գրկեց ինձ՝ փորձելով ներս տանել։

140 — Սիրելի՛ս, ես...ես ուզում եմ քեզ մի բան ասել։ Զանգիր նրանց և ասա, որ ես այսօր կեսօրին այնտեղ չեմ լինի։ Մեդա՛, սիրելի՛ս,— ասացի ես,— ես գիտեմ իմ սրտում, որ սիրում եմ Հիսուս Քրիստոսին։ Ես գիտեմ, որ մահից դեպի կյանք եմ դարձել, բայց չեմ ուզում, որ սատանան որևէ գործ ունենա ինձ հետ։ Ես չեմ կարող այսպես շարունակել։ Ես բանտարկյալ եմ։ Անընդհատ, երբ այս բաները շարունակվում են կատարվել, նման բաներ, և այս տեսիլքները գալիս են և նմանատիպ այլ բաներ։ Կամ ինչ էլ որ լինի,— ասացի ես,— դա կատարվում է ինձ հետ։ Ես չգիտեի, որ դա տեսիլք էր։ Ես դա տեսիլք չէի անվանում։ — Տրանսի նման բաները,— ասացի,— ես չգիտեմ, թե ինչ է դա։ Եվ սիրելի՛ս, ես...ես...ես...ես չեմ ուզում կատակ անել այդպիսի բաների հետ։ Նրանք, նրանք ինձ ասում են, որ դա սատանայից է, բայց ես սիրում եմ Տեր Հիսուսին։

141 — Ո՛հ,— ասաց նա,— Բիլլի, դու չպիտի լսես, թե մարդիկ ինչ են ասում քեզ։

142 — Բայց սիրելի՛ս, նայի՛ր մյուս քարոզիչներին,— ասացի ես,— ես...ես չեմ ուզում դա,— ասացի,— ես կգնամ իմ տեղը՝ անտառ։ Ես մոտ 15 դոլար ունեմ, հոգ կտանես Բիլլի մասին։ Այն ժամանակ Բիլը փոքրիկ տղա էր՝ փոքրիկ երեխա։ Ասացի. — Դու...դու...Դա կբավարարի քեզ ու Բիլլիին մի որոշ ժամանակ ապրելու համար։ Զանգիր նրանց և ասա, որ ես, ես հնարավոր է վերադառնամ վաղը, և հնարավոր է, որ ընդհանրապես չվերադառնամ։ Եթե հաջորդ հինգ օրերի ընթացքում չվերադառնամ, թող իմ տեղ մարդ նշանակեն,— ասացի,— Մեդա՛, ես ոչ մի դեպքում դուրս չեմ գա այդ անտառից, մինչև Աստված ինձ չխոստանա, որ ինձանից կհեռացնի այդ երևույթը, և թույլ չի տա, որ դա նորից կատարվի։ Մտածե՛ք, թե ինչպիսի անտեղյակության մեջ մարդը կարող է լինել։

143 Եվ այդ գիշեր ես գնացի այնտեղ։ Վերադարձա այդ փոքրիկ հին տնակը, մինչև հաջորդ օրվա գալը, որովհետև ուշ էր։ Ես պատրաստվում էի հաջորդ օրը գնալ իմ ճամբար, վերև...սարի հետևից ավելի հեռու, ավելի ճիշտ՝ բլուրից, և հասնել անտառներին։ Չեմ հավատում, որ նույնիսկ ՀԴԲ կգտներ ինձ այնտեղ։ Այսպիսով, այս փոքրիկ հին տնակը...ամբողջ այդ օրը ես աղոթում էի, մինչև խավարի թանձրանալը։ Աղոթում

էի, կարդում Աստվածաշնչում այն հատվածը, որտեղ ասվում է. *«Մարգարեների հոգիները ենթարկվում են մարգարեներին»:* Ես չէի կարողանում դա հասկանալ: Փոքրիկ հին տնակում խավարը չափազանց թանձրացավ:

144 Այնտեղ, որտեղ պատանի ժամանակ թակարդ էի դնում, այնտեղ թակարդների շարան ունեի, գնում էի այնտեղ ու ձուկ էի որսում և ամբողջ գիշերը մնում այնտեղ: Ընդամենը հին փոքրիկ կիսափլված տնակ էր, որը տարիներով կանգում էր այնտեղ: Երևի ինչ–որ մեկն բնակվել է այնտեղ, մինչ այն վիճակին հասնելը:

145 Այսպիսով ես, ես ուղղակի սպասում էի այնտեղ: Եվ ես մտածեցի՝ Դե: Սպասեցի մինչև մեկը, երկուսը, առավոտյան երեքը, քայլում էի հատակով վերև–ներքև, հետ ու առաջ: Նստեցի հին աթոռակին, փոքրիկ…ոչ թե աթոռակին, ինչ–որ մի բանի փոքրիկ հին արկղ էր: նստեցի այնտեղ և մտածեցի. «Ո՛վ Աստված, ինչո՞ւ ես այս ամենն ինձ հետ անում»: Ես ասացի. «Հա՛յր, Դու գիտես, որ ես սիրում եմ Քեզ: Դու գիտես, որ ես Քեզ սիրում եմ: Եվ ես…ես…ես չեմ ուզում սատանայի կողմից բռնված լինել: Ես չեմ ուզում, որ այս բաները կատարվեն ինձ հետ: Խնդրո՜ւմ եմ, ո՛վ Աստված, թույլ մի տուր որ դա կրկին կատարվի»:

146 Ես ասացի. «Ես, ես սիրում եմ Քեզ: Ես չեմ ուզում դժոխք գնալ: Ի՞նչ օգուտ իմ քարոզից ու ջանքերից, և ջանքեր գործադրելուց եթե ես սխալ եմ: Եվ ոչ միայն ես ինքս եմ դժոխք գնում, այլև հազարավոր մարդկանց էլ առաջնորդում եմ»: Կամ հարյուրավոր մարդկանց այդ օրերում: Եվ ես ասացի…Ես մեծ ծառայություն ունեի: Եվ ես ասացի. «Ես չեմ ուզում, որ այդ բաները կրկին ինձ հետ կատարվեն»:

147 Եվ ես նստեցի այդ աթոռակին: Ես ուղղակի նստեցի, օհ, այս դիրքով, հենց *այսպես:* Եվ մեկ էլ սենյակում Լույսի առկայծում տեսա: Մտածեցի, թե ինչ–որ մեկն է մոտենում լապտերով: Նայեցի շուրջը, և մտածեցի՝ Դե…Եվ ահա Այն անմիջապես իմ դիմաց էր: Եվ հին տախտակները հատակին: Եվ ահա Այն անմիջապես իմ դիմաց էր: Անկյունում փոքրիկ գլանաձև վառավան էր, վերևի մասը հանած էր: Եվ, և հենց *այդտեղ*՝ հատակին Լույս էր, մտածեցի. «Որտեղի՞ց է դա գալիս: Այն չէր կարող գալ…»:

148 Նայեցի շուրջը: Եվ ահա Այն իմ գլխավերևում էր, հենց *այս* նույն Լույսն անմիջապես իմ գլխավերևում էր,

այդպես կախված։ Կրակի նման պտտվում էր շուրջը, սաթի գույնի էր, թռչում էր. «Խ–շ–շ–շ–շ, խ–շ–շ–շ–շ, խ–շ–շ–շ–շ» հենց այդպես Դրա գլխավերևում։ Նայեցի Դրան, մտածեցի. «Ի՞նչ է Դա»։ Դա վախեցրեց ինձ։

149 Լսեցի, թե ինչպես է ինչ–որ մեկը գալիս։ [Բրանհամ եղբայրը ցուցադրում է։ Ծան. խմբ], ուղղակի քայլում էր, միայն թե ոտաբոբիկ էր։ Եվ ես տեսա, թե ինչպես Մարդու ոտքը ներս մտավ։ Սենյակում մութ էր, բացառությամբ հենց այն տեղի, որտեղ Այն փայլում էր ներքևում։ Եվ ես տեսա, թե ինչպես Մարդու ոտքը ներս մտավ։ Եվ երբ Նա սենյակ մտավ, բարձրացավ օդ։ Նա մոտ…կարծես մոտ երկու հարյուր ֆունտ կկշռեր։ Նրա ձեռքերը *այսպես* խաչված էին։ Ես Դա տեսա մրրիկի մեջ, լսեցի, թե ինչպես էր ինձ հետ խոսում, և տեսա Դա Լույսի տեսքով, բայց առաջին անգամ էր, որ Դրա պատկերը տեսա։ Այն մոտեցավ ինձ, շատ մոտ։

150 Անկեղծ ասած, բարեկամներ, ինձ, ինձ թվում էր, թե սիրտս կկանգնի։ Ես…Միայն պատկերացրեք։ Դրեք ձեզ այնտեղ և նույն բանը կզգաք։ Միգուցե դու ավելի երկար ճանապարհ ես անցել, քան ես, գուցե ավելի երկար ժամանակ ես քրիստոնյա, բայց դա քեզ կստիպեր այդպես զգալ։ Որովհետև հարյուրավոր այցելություններից հետո էլ դա ինձ կաթվածահար է անում, երբ մոտ է գալիս։ Այն երբեմն ինձ նույնիսկ…Ես գրեթե ուշաթափվում եմ, այնքան եմ թուլանում, շատ հաճախ, երբ լքում եմ բեմահարթակը։ Եթե շատ երկար մնամ, ես լրիվ շարքից դուրս կգամ։ Եղել է, որ ժամերով ինձ տարել են, իսկ ես նույնիսկ չեմ իմացել, թե որտեղ եմ գտնվում։ Եվ ես չեմ կարող դա բացատրել։ Կարդացե՛ք այստեղ՝ Աստվածաշնչում և Այն կբացատրի, թե ինչ է դա։ Աստվածաշունչն է այդպես ասում։

151 Այսպիսով ես նստած էի այնտեղ և նայում էի Նրան։ Ձեռքս *այդպես* բարձրացրած էր։ Նա այնքան հաճելի էր նայում ինձ։ Բայց Ինքը շատ խորը Ձայն ուներ, և Նա ասաց. — *Մի՛ վախենա, ես ուղարկված եմ Ամենակարող Աստծո ներկայությունից։* Եվ երբ Նա խոսեց, այդ Ձայնը, դա նույն Ձայնն էր, որը խոսեց ինձ հետ, երբ ես երկու տարեկան էի, ամբողջ ընթացքում։ Ես գիտեի, որ դա Նա է։ Եվ ես մտածեցի՝ հիմա…

152 Լսե՛ք սա։ Լսե՛ք հիմա զրույցը։ Ես կմեջբերեմ դա որքան կարող եմ, ինչքան գիտեմ, բառ առ բառ, որովհետև համարյա չէի հիշում։

153 Նա…Ես ասացի…Այսպես նայեցի Նրան: Նա ասաց. — *Մի՛ վախենա,*— ասպես հանգիստ, ասաց,— *ես ուղարկված եմ Ամենակարող Աստծո ներկայությունից քեզ ասելու, որ քո յուրահատուկ ծնունդը…* Գիտեք, թե ինչպիսին էր իմ ծնունդը: Այդ նույն Լույսը կախվել էր իմ վերևում, երբ ես ծնվել էի: Եվ այսպես, Նա ասաց. — *Քո յուրահատուկ ծնունդը և ոչ սովորական կյանքը նրա համար էր, որ ցույց տա, որ դու պետք է գնաս աշխարհով մեկ և աղոթես հիվանդների համար,*— և ասաց,— *և անկախ նրանցից, թե իրենց մոտ ինչ…* Եվ Նա նշեց, Աստված, Ով իմ Դատավորն է, գիտի, որ Նա նշեց «քաղցկեղը»: Ասաց. — *Ոչինչ…Եթե դու կարողանաս դրդել մարդկանց քեզ հավատալ և անկեղծ աղոթես, ոչինչ չի դիմակայի քո աղոթքին, նույնիսկ քաղցկեղը:* Տեսնում եք. «Եթե կարողանաս դրդել մարդկանց քեզ հավատալ»:

154 Ես տեսա, որ Նա իմ թշնամին չէր, Նա իմ Բարեկամն էր: Եվ ես չգիտեի, կամ, կամ մեռնում էի, կամ թե ինչ էր կատարվում, երբ Նա այդպես մոտենում էր ինձ: Ես ասացի. — Սը՛ր,— ասացի ես,— ես…Ի՞նչ ես գիտեի բժշկության և նման բաների մասին, այդ պարգևների մասին: Ասացի. — Սը՛ր, ես…Ես…ես աղքատ մարդ եմ,— ասացի,— ես իմ հարազատների մեջ եմ: Ես…ես ապրում եմ իմ հարազատների հետ, որոնք աղքատ են: Ես անկիրթ եմ,— ասացի,— և ես…ես…ես չեմ կարողանա, նրանք, նրանք ինձ չեն հասկանա,— ասացի,— նրանք, նրանք չեն…նրանք ինձ չեն լսի:

155 — *Ինչպես Մովսես մարգարեին երկու պարգև,*— ավելի ճիշտ,— *նշաններ էր տրվել հաստատելու իր ծառայությունը, այնպես էլ քեզ կտրվի երկու, այնպես էլ քեզ է տրված երկու պարգև քո ծառայությունը հաստատելու համար,*— ասաց,— *դրանցից մեկը կլինի այն, որ մարդու աջ ձեռքը բռնելով քո ձախ ձեռքով, որի համար աղոթում ես,*— և ասաց,— *հետո ուղղակի հանգիստ կկանգնես և այն…մարմնիդ վրա ֆիզիկական ազդեցություն կլինի,* — ասաց,— *այդ ժամանակ աղոթիր: Եվ եթե այն հեռանա, ապա հիվանդությունը կհեռանա մարդկանցից: Իսկ եթե չհեռանա, ապա ուղղակի օրհնություն խնդրիր այդ մարդու համար և անցիր առաջ:*

— Դե,— ասացի ես,— Սը՛ր, վախենում եմ, որ նրանք ինձ չընդունեն:

156 — *Եվ հաջորդ բանը տեղի կունենա, եթե նրանք*

դրան չլսեն, այն ժամանակ սրան կլսեն,— ասաց,— *այն ժամանակ կկատարվի այն, որ դու կկարողանաս իմանալ նրանց սրտի գաղտնիքը,*— ասաց,— *սրան նրանք կլսեն:*

157 — Լավ,— ասացի ես,— Սը՛ր, դրա համար եմ ես այստեղ գտնվում այս երեկո: Ծառայողները ասում են ինձ, որ այդ տեսիլքները սուտ են:

158 — *Դու այդ նպատակի համար ես ծնվել:* (Տեսնում եք «պարգևներն ու կոչումները անդառնալի են»): Նա ասաց. «Դու այդ նպատակի համար ես ծնվել»:

159 — Լավ, Սը՛ր,— ասացի ես,— դա, իմ հովիվն ինձ ասել է, որ դա չար ոգի է եղել,— և ասացի,— նրանք...Դրա համար եմ ես աղոթում այստեղ:

160 Ահա, թե ինչ Նա մեջբերեց ինձ համար: Նա ինձ պատմեց Տեր Հիսուսի առաջին գալուստի մասին: Ես ասացի...

161 Տարօրինակն այն էր, բարեկամներ...Ես այստեղ մի ռոպեյով կանգ կառնեմ, հետ կվերադառնամ: Ինչն էր ինձ ամենաշատը վախեցնում, երբ ամեն անգամ հանդիպում էի բախտագուշակների, որ նրանք գիտակցում էին, որ ինչ-որ բան է կատարվել: Եվ դա ուղղակի...քիչ էր մնում սպաներ ինձ:

162 Օրինակ՝ մի օր զարմիկներիս հետ անցնում էինք դիմակահանդեսի տարածքով, ընդամենը երեխաներ էինք, անցնում էինք կողքով: Այդ վրաններից մեկում բախտագուշակ էր նստած, երիտասարդ տիկին, գեղեցիկ երիտասարդ տիկին էր նստած այնտեղ: Եվ մենք բոլորս գնում, անցնում էինք կողքով: Նա ասաց. — Հե՜յ, դո՛ւ մոտեցի՛ր այստեղ մեկ ռոպեով: Եվ մենք երեքս էլ շրջվեցինք: — Դու՝ զոլավոր սվիտերով: Այդ ես էի:

163 — Այո՞, տիկին: Մտածեցի, գուցե կոկա-կոլա է ուզում կամ որևէ այլ բան, որ գնեմ իր համար: Երիտասարդ կին էր, գուցե քսանն անց կամ նման մի բան, նստած էր այնտեղ: Մոտեցա, ասացի. — Այո՛, տիկին, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

164 — Իսկ դու գիտե՞ս որ քեզ հետևում է մի Լույս: Դու ծնվել ես նշանի տակ:

— Դուք ի՞նչ նկատի ունեք:

165 — Դու ծնվել ես նշանի տակ: Քեզ Լույս է հետևում: Դու ծնվել ես աստվածային կոչման համար:

— Հեռացե՛ք այստեղից, տիկին:

166 Ծարունակեցի ճանապարհս, որովհետև մայրիկս միշտ ասում էր, որ այդ բաները սատանայից են: Եվ նա իրավացի էր: Այսպիսով ես...Դա վախեցրեց ինձ:

167 Մի օր էլ, երբ որսի պահպանման տեսուչ էի, մոտենում էի ավտոբուսին: Նստեցի ավտոբուս: Միշտ թվում էր, թե ենթարկված ես հոգիներին: Ես կանգնած էի այնտեղ, իսկ այդ նավաստին՝ իմ հետևում: Գնում էի պարեկության, Հենրիվիլի անտառները, ավտոբուսում էի: Ես շարունակ տարօրինակ ինչ-որ բան էի զգում: Նայեցի շուրջս, և այնտեղ մեծ խոշոր ծանրակշիռ լավ հագնցված մի, մի կին էր նստած: Նա ասաց. — Բարև ձեզ:

— Բարև:

168 Մտածեցի, որ դա պարզապես կին է, գիտեք, խոսում է, դրա համար ես ուղղակի շարունակում էի...— Ես մի րոպեով կուղեի խոսել ձեզ հետ:

— Այո՞, տիկին.— շրջվեցի:

— Դուք գիտեի՞ք, որ նշանի տակ եք ծնվել:

169 Ես մտածեցի. «Եվս մեկը այն տարօրինակ կանանցից»: Դրա համար ես ուղղակի նայում էի դուրս: Ոչ մի բառ չասացի, ուղղակի շարունակում էի...

170 — Կարելի՞ է խոսել ձեզ հետ մի պոպեով,— ասաց նա: Ես ուղղակի շարունակում էի...— Ձեզ այդպես մի պահեք:

171 Ես պարզապես շարունակում էի նայել իմ առջև: Ես մտածեցի. «Դա ջենտլմենին հարիր չէ»:

— Ես կցանկանայի մի րոպեով խոսել ձեզ հետ:

172 Ես շարունակում էի նայել իմ արջև, և ոչ մի ուշադրություն չէի դարձնում նրան: Միանգամից մտածեցի. «Տեսնենք, թե արդյոք նա էլ մնացածների նման կասի»: Շրջվեցի, ես մտածեցի. «Ո՛հ, Աստված իմ: Դա ինձ կցնցի, ես գիտեմ»: Որովհետև ինձ դուր չէր գալիս մտածել այդ մասին: Շրջվեցի:

173 — Գուցե ես ավելի լավ է բացատրվեմ: Նա ասաց. — Ես աստղաբան եմ:

— Ես այդպես էլ գիտեի, որ դրա նման մեկն եք:

174 — Ես գնում եմ Չիկագո՝ այցելելու տղային, ով մկրտչական ծառայող է:

— Այո, տիկին:

175 — Որևէ մեկը ձեզ երբևէ ասե՞լ է, որ դուք նշանի տակ եք ծնվել:

176 — Ոչ, տիկին։ Ես այնտեղ ստեցի իրեն, տեսնում եք, և ասացի...պարզապես ուզում էի տեսնել, թե ինչ է նա ասելու։ Եվ նա ասաց...Ես ասացի. — Ոչ, տիկին։

— Չեն...Ծառայողները երբեք չեն ասե՞լ ձեզ։

— Ես ոչ մի ընդհանուր բան չունեմ ծառայողների հետ։

— Ըհը։

Եվ ասացի...նա նա ինձ ասաց...Ես ասացի՝ Դե...

177 — Եթե ես ճշգրիտ ասեմ, թե երբ եք ծնվել, դուք կհավատա՞ք ինձ։

— Ոչ, տիկին։

— Ես կարող եմ ձեզ ասել, թե երբ եք ծնվել։

— Ես դրան չեմ հավատում։

178 — Դուք ծնվել եք 1909 թվականի ապրիլի 6-ին՝ առավոտյան ժամը հինգին։

179 — Ճիշտ է,— ասացի,— դուք որտեղի՞ց գիտեք դա,— ասացի,— այդ դեպքում ասեք այս նավաստիին, թե երբ է նա ծնվել։

— Չեմ կարող։

— Ինչո՞ւ։ Որտեղի՞ց դուք դա գիտեք։

180 — Տեսե՛ք, սը՛ր,— ասաց,— երբ սկսեց խոսել այս աստղագիտության մասին, ասաց,— այսքան տարի մեկ...— ասաց,— հիշո՞ւմ եք, թե երբ հայտնվեց առավոտյան աստղը, որը մոգերին առաջնորդեց Հիսուս Քրիստոսի մոտ։

181 Ես մի տեսակ լռվեցի, գիտեք, ասացի. — Դե, ես ոչինչ չգիտեմ կրոնի մասին։

182 — Դուք այնուամենայնիվ լսել եք մոգերի մասին, որոնք եկան Հիսուսին տեսնելու։

— Այո։

— Ովքե՞ր էին այդ մոգերը։

—Ո՛հ,— ասացի ես,— նրանք պարզապես մոգեր էին։ Դա ամենն է, ինչ ես գիտեմ։

183 — Ո՞վ է մոգը։ Նույն բանն է, ինչ որ ես՝ աստղագուշակ, նրանց անվանում են «աստղագետ»։ Գիտե՞ք, Աստված երկրի վրա մի բան կատարելուց առաջ միշտ հռչակում է այդ երկնքում, հետո երկրի վրա։

— Չգիտեմ։

184 — Դե...Նա տվեց երկու թե երեք, երկու...երեք աստղերի անուններ, ինչպես Մարսը, Յուպիտերը և Վեներան: Դա դրանք չէին, բայց ասաց. — Նրանց ճանապարհները խաչվեցին, միացան և կատարեցին...— ասաց,— նրանք երեք մոգեր էին, որ եկան Տեր Հիսուսին հանդիպելու, և նրանցից մեկը Սեմի աղգատոհմից էր, մեկը՝ Քամի, իսկ մյուսը՝ Հաբեթի, — ասաց,— երբ նրանք հանդիպեցին Բեթլեհեմում, երեք աստղերը, որոնցից նրանք...Երկրի վրա յուրաքանչյուր մարդ,— ասաց,— ինչ-որ կապ ունի աստղերի հետ, — ասաց,— հարցրե՛ք այդ նավաստիին, երբ լուսինը դուրս է գալիս և երկնային մոլորակները դուրս են գալիս, դա կապ ունի՞ մակընթացության հետ:

— Ես նրան հարցնելու կարիք չունեմ, ինքս էլ դա գիտեմ:

185 — Ձեր ծնունդը ինչ-որ կապ ունի աստղերի հետ:

— Դե, ես դա չգիտեմ:

186 — Հիմա, այս երեք մոգերը եկան,— ասաց,— երբ այս երեք աստղերը, երբ նրանք...Նրանք տարբեր ուղություններից եկան և հանդիպեցին Բեթլեհեմում: Եվ ասում են, որ նրանք պարզեցին և խորհրդակցեցին, և նրանք Քամի, Սեմի և Հաբեթի ազգատոհմից էին, Նույի երեք որդիներից, — ասաց,— այդ ժամանակ նրանք եկան և երկրպագեցին Տեր Հիսուս Քրիստոսին,— ասաց,— երբ նրանք հեռանում էին,— ասաց,— նրանք նվերներ բերեցին և դրեցին Իր առջև,

187 — ասաց,— Հիսուս Քրիստոսն ասաց Իր ծառայության ժամանակ, որ երբ այս Ավետարանը քարոզվի ողջ աշխարհին (Սեմի, Քամի և Հաբեթի մարդկանց), այն ժամանակ Նա նորից կգա,— ասաց,— հիմա, այդ մոլորակները, երկնային մոլորակները, երբ նրանք պտտվում են...Ասաց,— նրանք բաժանված են: Հայտնի է, որ դրանք երբեք չեն եղել երկրի վրա: Բայց,— ասաց,— յուրաքանչյուր այսքան հարյուր տարին մեկ իրենց ուղեծրերն *այսպես* հատվում են: Եթե այստեղ աստղագետ լինի, դուք հավանաբար գիտեք, թե ինչի մասին էր նա խոսում: Ես չգիտեմ: Այսպիսով երբ նա խոսու-...Ասաց. — Այդպես նրանք հատվում են, —ասաց,— ի հիշատակ այդ ամենամեծ Պարգևի, որ երբևէ տրված է եղել մարդկությանը, դա այն էր, երբ Աստված տվեց Իր Որդուն: Երբ այս մոլորակները նորից հատվում են,— ասաց,— Նա ևս մի պարգև է ուղարկում երկրի վրա, —

ասաց,— դուք ծնվել եք հատման այդ ժամանակ,— ասաց,— դա է պատճառը, որ ես դա գիտեի։

188 Այդ ժամանակ ես ասացի. — Տիկի՛ն, նախ և առաջ ես այդ ոչ մի բանին չեմ հավատում։ Ես կրոնավոր չեմ և չեմ ցանկանում այլևս ոչ մի բան լսել դրա մասին։ Հեռացա։ Ես շատ արագ ազատվեցի նրանից։ Իջա ավտոբուսից։

189 Եվ ամեն անգամ որևէ...Ես շրջանցում էի դրանցից մեկին, ահա թե ինչ էր լինում։ Ես մտածեցի. «Ինչո՞ւ են այդ դևերն այդպես անում»։

190 Բացի այդ քարոզիչնեչը նույնպես ասում են՝ Դա սատանայից է։ Դա սատանայից է։ Նրանք ստիպում էին ինձ հավատալ դրան։

191 Հետո այդ գիշեր այնտեղ, երբ ես...երբ Նա հիշատակեց դա, ես Նրան հարցրեցի. — Ինչո՞ւ այդ բոլոր մեդիումները և նման բաներ, և այդ դևերով բռնված մարդիկ, ովքեր ինձ միշտ ասում են Դրա մասին. իսկ իմ հովիվը՝ իմ եղբայրները, ինձ ասում են, որ դա չար ոգուց է։

192 Այժմ լսեք, թե, ինչ ասաց Նա, Ով կախված է այնտեղ՝ նկարի վրա։ — Ինչպես այն ժամանակ էր, այնպես էլ հիմա է։ Եվ Նա սկսեց հիշեցնել ինձ այն մասին, որ՝ Երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծառայությունը սկսվեց, ծառայողներն ասացին. «Նա Բեեղզեբուղ է, սատանա, իսկ դևերն ասում էին՝ Նա Աստծո Որդին է, Իսրայելի Սուրբը»։ Դևերը... Նայե՛ք Պողոսին և Շիղային, երբ նրանք քարոզում էին այնտեղ։ Ծառայողներն ասում էին. «Այս մարդիկ աշխարհը գլխի վայր են շուռ տալիս։ Նրանք չարից են, նրանք, նրանք սատանայից են»։ Իսկ փողոցային գուշակուհին ճանաչեց, որ Պողոսն ու Շիղան Աստծո մարդիկ էին և ասաց. «Նրանք Աստծո մարդիկ են, ովքեր մեզ պատմում են Կյանքի ճանապարհի մասին»։ Ճի՞շտ է։ Ոգեհարցներն ու գուշակները, դևերով բռնված մարդիկ։

193 Բայց մենք այնքան ենք թթվել աստվածաբանության մեջ, որ ոչինչ չգիտենք Հոգու մասին։ Հուսով եմ, որ դուք սրանից հետո էլ սիրում եք ինձ։ Բայց դա այդպես է։ Ես հոգեգալստականներին էլ ի նկատի ունեմ։ Դա ճիշտ է։ Ուղղակի աղաղակելը և շուրջ պարելը չի նշանակում, որ դուք որևէ բան գիտեք Հոգու մասին։

194 Դա անձնական հաղորդակցություն է, երես առ երես, ահա թե ինչի կարիքը դուք ունեք։ Այդպիսի Եկեղեցի է Աստված պատրաստվում բարձրացնել, ճիշտ է, երբ հավաքվեն միության, զորության և Հոգու մեջ։

195 Եվ Նա հղում կատարեց դրա վրա։ Նաև ինձ ասաց, թե ինչպես են ծառայողները սխալ հասկացել Դա, և հավաստիացրեց, որ նրանք սխալ են Դա հասկացել։ Եվ երբ Նա ինձ պատմեց այդ մասին և, թե ինչպես էր, որ Հիսուսը…

196 Ես ասացի. — Իսկ այս բաները, որոնք կատարվում են ինձ հետ, ի՞նչ կասես սրա մասին։

197 Եվ տեսե՛ք, Նա ասաց. — *Դա կշատանա և ավելի զորավոր ու զորավոր կդառնա։* Եվ Նա անդրադարձավ ինձ՝ պատմելով, թե ինչպես Հիսուսն արեց դա, թե ինչպես Նա եկավ և Ինքն օժտված էր զորությունով, որ կարող էր կանխասել բաներ և ասել ջրհորի մոտ կանգնած կնոջը, չէր պնդում, որ Ինքը բժշկող է, հայտարարում էր, որ անում էր այդ բաները ճիշտ այնպես, ինչպես Հայրն էր Իրեն ցույց տալիս։

— Ի՞նչ տեսակի հոգի էր դա,— հարցրեցի ես։

— *Դա Սուրբ Հոգին էր,*— ասաց Նա։

198 Այդ ժամանակ ներսումս ինչ-որ տարօրինակ բան կատարվեց, ես հասկացա, որ այն բաները, ինչից ես երես էի թեքել, այն են, ինչի համար Աստված բերել էր ինձ այստեղ։ Նաև հասկացա, որ դա անցած ժամանակների փարիսեցիների նման էր՝ նրանք ինձ սխալ էին Սուրբ Գիրքը մեկնաբանել։ Այդ ժամանակվանից ի վեր ես վերցրել եմ իմ մեկնաբանությունը Դրա վերաբերյալ, այն, ինչ Սուրբ Հոգին է ասել։

— Ես կգնամ,— ասացի ես։

— *Ես քեզ հետ կլինեմ,*— ասաց Նա։

199 Եվ հրեշտակը նորից քայլելով մտավ Լուսյի մեջ, որը սկսեց այսպես պտտվել շուրջը և շուրջը և շուրջը և շուրջը և Իր ոտքերի շուրջն այդպես, մտավ Լույսի մեջ և շենքից դուրս եկավ։

Ես տուն գնացի նոր մարդ դարձաց։

200 Ես գնացի եկեղեցի և պատմեցի մադկանց այդ մասին։ Կիրակի երեկոյան էր…

201 Չորեքշաբթի երեկոյան մի կին բերեցին այնտեղ, Մայոսի բուժքույրերից մեկն էր, ով մահանում էր քաղցկեղից, միայն մի ստվեր էր։ Երբ ես իջա՝ իր ձեռքը բռնելու, իմ առջև տեսիլք հայտնվեց, ցույց տրվեց, թե ինչպես է նա նորից վերադառնում բուժքրոջ աշխատանքին։ Իսկ նա Լուիզվիլի քաղցկեղով

տառապողների ցուցակում էր, որպես «տարիներ առաջ մահացած»: Հիմա նա Ջեֆերսոնվիլում է, բուժքույր է, արդեն քանի տարի բուժքույր է աշխատում: Որովհետև ես նայեցի այնտեղ և տեսա այդ տեսիլքը: Ես շուռ եկա, գրեթե չիմանալով, թե ինչ եմ անում, երբ կանգնած էի այնտեղ, դողը ընկավ ջանս, երբ առաջին անգամ բերեցին այդ հիվանդին և դրեցին այնտեղ: Բուժքույրերը և մնացածները կանգնած էին նրա շուրջը, իսկ ինքը պառկած էր այնտեղ, դեմքը ամբողջությամբ ծռված էր, աչքերը փոս ընկած:

202 Մարջի Մորգան: Եթե ուզում եք գրել նրան. 411 Կնոբլոխ պողոտա, Ջեֆերսոնվիլ, Ինդիանա: Կամ գրեք Քլարկ Կաունթի հիվանդանոցին, Ջեֆերսոնվիլ, Ինդիանա: Թող նա տա ձեզ իր վկայությունը:

203 Ես նայեցի այնտեղ: Եվ դա առաջին դեպքն էր, որ տեսա այնտեղ, այնտեղ եկավ տեսիլքը: Ես տեսա այն կնոջը կրկին հիվանդներին խնամելիս, շրջում էր, լավ, ուժեղ և առողջ վիճակում էր: Ես ասացի. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ», «Դու կապրես և չես մեռնի»:

204 Նրա ամուսինը շատ բարձր մարդ է աշխարհիկ գործերում, *այսպես* նայեց ինձ: Ես ասացի. — Սը՛ր, մի՛ վախեցեք: Ձեր կինը կապրի:

205 Նա ինձ կանչեց դուրս, ասաց...երկու թե երեք բժշկի անուն տվեց, ասաց. — Ճանաչո՞ւմ ես նրանց:

— Այո:

206 — Այսպես ուրեմն,— ասաց,— ես նրա հետ գոլֆ եմ խաղացել,— ասաց,— քաղցկեղը փաթաթվել է նրա աղիների շուրջ, նույնիսկ հոգնայի միջոցով հնարավոր չէ լվանալ այն:

207 — Ինձ համար կարևոր չէ, թե նա ինչ խնդիր ունի: Ինչ–որ բան այստեղ, ես տեսիլք տեսա: Եվ այն Մարդը, ով պատմեց ինձ, ասաց, որ ինչ էլ տեսնեմ, ասեմ և այն կկատարվի: Նա ասաց ինձ և ես հավատում եմ դրան:

208 Փա՜ռք Աստծուն: Մի քանի օր դրանից հետո նա լվացք էր անում և գնում էր ամեն տեղ: Նրա քաշը հիմա կազմում է մոտավորապես 165 ֆունտ կատարելապես առողջ է:

209 Հետո, երբ ես ընդունեցի, այն տարածվեց: Հետո Ռոբերտ Դոգերթին զանգեց ինձ: Եվ ահա այն տարածվեց ամբողջ Թեքսասով, աշխարհով մեկ:

210 Եվ մի երեկո, չորրորդ թե հինգերորդ ժողովի ժամանակ էր...ես չէի կարողանում հասկանալ լեզուներով խոսելը և այլն: Ես հավատում էի Սուրբ Հոգու մկրտությանը, հավատում էի, որ մարդիկ կարող են խոսել լեզուներով: Եվ մի երեկո երբ ես հարթակով անցնում էի...մեծ եկեղեցում էր, Սան Անտոնիո, Թեքսաս, դուրս էի գալիս այնտեղ, հարթակին նստած մի տղամարդ սկսեց խոսել լեզուներով շատ արագ, ինչպես գնդացիրը կամ ավտոմատը: Վերջից՝ դահլիճի վերջից, մի ուրիշ տղամարդ վեր կացավ և ասաց. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. «Հարթակով քայլող մարդը գալիս է մի ծառայությունով, որը նախասահմանված է Ամենակարող Աստծո կողմից: Եվ ինչպես Հովհաննես Մկրտիչն ուղարկվեց որպես Հիսուս Քրիստոսի առաջին գալստյան ազդարար, նույնպես էլ նա բերում է մի պատգամ, որը կազդարարի Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը»:

211 Ես քիչ էր մնում գետնի տակ մտնեի: Նայեցի վեր, ասացի. — Դուք այդ մարդուն ճանաչո՞ւմ եք:

— Ոչ, պարոն:

— Դուք ճանաչո՞ւմ եք նրան:

— Ոչ, պարոն:

— Դուք ինձ ճանաչո՞ւմ եք:

— Ոչ, պարոն:

— Ի՞նչ եք անում այստեղ:

212 — Ես թերթում եմ դա կարդացել: Եվ սովորաբար...Դա հավաքույթի առաջին երեկոն էր:

Ես նայեցի այնտեղ և ասացի. — Ինչպե՞ս եք եկել այստեղ:

213 — Իմ հարազատներից մեկն էր ինձ ասել, որ այստեղ լինելու եք դուք՝ «աստվածային բժշկող», և ես եկա:

— Դուք բոլորդ իրար չե՞ք ճանաչում:

— Ոչ:

214 Ո՛հ, Աստված իմ: Այնտեղ ես տեսա, որ նույն Սուրբ Հոգու զորությունը...Այնինչ մի ժամանակ ես մտածում էի, որ դա սխալ էր, և գիտեի, որ ես...Նույն այս Աստծո Հրեշտակը միանում էր այն մարդկանց հետ, ովքեր ունեին այդ բաները: Թեև նրանք ունեին կեղծիքներ, շատ խառնաշփոթություններ և շատ դատարկախոսություններ, բայց դրանում իրական

ինչ–որ բան կար: [Ձձայնագրված հատված ձայներիզի վրա. Ծան. խմբ.]...Քրիստոս: Եվ ես տեսա, որ դա, դա ճիշտ է:

215 Ո՛հ, տարիներն անցան, և մարդիկ հավաքույթներում տեսնում էին տեսիլքներ և այլն:

216 Մի անգամ լուսանկարիչը հանել էր Դա նկարի վրա, երբ ես կարծեմ կանգնած էի ինչ–որ տեղ Արկանզասում մոտավորապես այսպիսի հավաքույթի ժամանամ, մոտավորապես այսպիսի լսարանում: Ես կանգնած էի՝ փորձելով բացատել Դա: Մարդիկ գիտեին, նրանք նստել և լսելում էին՝ մեթոդականները, մկրտականները, երիցականները և այլն: Հետո ես պատահական նայեցի՝ մոտենալով դռանը, ահա Այն մոտենում է, գալիս է՝ «Խ–շ–շ–շ–շ, խ–շ–շ–շ–շ»:

217 Ես ասացի. — Ես էլ ստիպված չեմ լինելու խոսել, որովհետև ահա Այն հիմա գալիս է: Եվ Այն շարժվեց դեպի վեր, մարդիկ սկսեցին բղավել: Բարձրացավ այնտեղ, որտեղ ես էի և հաստատվեց:

218 Հենց այն ժամանակ, երբ Այն տեղավորվում էր, մի ծառայող վազելով եկավ և ասաց. — Լսե՛ք, ես տեսնում եմ Դա: Եվ Դա հարվածեց նրան կուրությամբ, նա երերաց: Կարող եք նայել նրա նկարին այնտեղ՝ գրքում և տեսնել դա, թե ինչպես նա երերաց, գլուխն այդպես կախված: Կարող եք նրա նկարը տեսնել:

219 Եվ այնտեղ Այն տեղավորվեց: Հենց այդ ժամանակ թերթի լուսանկարիչը նկարել էր Դա: Բայց Տերը պատրաստ չէր:

220 Մի գիշեր էլ Թեքսասի Հյուստոն քաղաքում, երբ, օհ, հազարավոր մարդիկ...Ութ հարյուր...ութ հազար մարդ այնտեղ, ինչպես է դա կաչվում, երաժշտական դահլիճում, վերադարձանք «Sam Houston Coliseum»–ում:

221 Եվ այդ երեկո այնտեղ՝ այդ դեբատի ժամանակ, երբ մկրտական քարոզիչն ասաց, որ ես «ոչ այլ ինչ, քան ստոր կեղծավոր եմ և ինքնակոչիկ, կրոնական ինքնակոչիկ, ու ինձ պետք է դուրս անել քաղաքից», և դա անողն ինքն է լինելու:

222 Բոսվորտ եղբայրն ասաց. — Եղբա՛յր Բրանհամ, դուք նման բան թո՞ւյլ կտաք: Կանչիր նրան պատասխանատվության:

223 — Ոչ, պարոն, ես չեմ հավատում շփոթության: Ավետարանը ստեղծված չէ աղմուկի համար, այն

ստեղծված է ապրելու համար,— ասացի,— կապ չունի, թե որքան ես համոզելու նրան, նա գնալու է նույն ճանապարհով,— ասացի,— Նա...ոչ մի բան չի փոխի իր համար: Եթե Տերը չի կարող խոսել նրա սրտի հետ, ես ինչպե՞ս կարող եմ:

224 Հաջորդ օրը դա հայտնվեց թերթում, որտեղ ասվում էր. «Դա ցույց է տալիս, թե ինչ խմորից են նրանք պատրաստված», Հյուստոն քրոնիկլ: Գրված էր. «Ցույց է տալիս, թե ինչ խմորից են նրանք պատրաստված, իրենք վախենում են կանգնել նրա համար, ինչի մասին քարոզում են»:

225 Ծեր Բոսվորտ եղբայրը մոտեցավ ինձ, այդ ժամանակ յոթանասունի մեջ էր, հաճելի տարեց եղբայր է, մի ձեռքով գրկեց ինձ և ասաց. — Եղբա՛յր Բրանհամ,— ասաց նա,— դուք ուզում եք ասել, որ չե՞ք պատրաստվում դրան պատասխանել:

226 — Ոչ, Բոսվորտ եղբայր: Ոչ, պարոն: Ես չեմ պատրաստվում դրան պատասխանել,— ասացի,— դա ոչ մի լավ բանի չի հանգեցնի,— ասացի,— միայն շփոթություն է առաճացնելու, երբ բեմը լքենք,— ասացի,— ես հիմա հավաքույթ եմ անցկացնում, և չեմ ուզում, որ ամեն բան այդպես քանդվի,— ասացի,— ուղղակի թողեք, որ նա շարունակի,— ասացի,— ահա և վերջ, նա պարզապես չաչանակութուն է անում,— ասացի,— նախկինում ունեցել ենք այդպիսիներին, և նրանց հետ խոսելը անոգուտ է,— ասացի,— նրանք կգնան իրենք իրենց պահելով,— ասացի,— եթե նրանք մի անգամ ստացել են Ճշմարտության գիտությունը, իսկ հետո չեն ընդունում Դա, Աստվածաշունչն է ասում, որ նրանք անցել են բաժանման գիծը և նրանց այլևս չի ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ գալիք աշխարհում: Նրանք Դրան «սատանա» են անվանում և չեն կարող ոչինչ անել դրա հետ կապված: Նրանք բռնված են կրոնական ոգով, որը սատանան է:

227 Քանի՞սը գիտեն, որ դա ճշմարտություն է, որ սատանայի ոգին կորանավոր է: Այո, պարոն, ֆունդամենտալ է որքան հնարավոր է: Այսպիսով, երբ ես ասացի «ֆունդամենտալ», դա այդքան էլ հարթ չգնաց, բայց դա ճշմարտություն է: *«Աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց նրա զորությունը ուրացել են»:* Դա ճիշտ է: Նշաններն ու հրաշքները, ահա թե ինչն է միշտ ապացուցում Աստծուն: Եվ Հիսուսն ասաց, որ

վերջին օրերում նույն բանն է լինելու։ Եվ ուշադրությո՛ւն դարձրեք։

228 Ծեր Բոսվորտ եղբայրը, ես...նա պատրաստվում էր ինձ հետ գալ, բայց հոգնած էր։ Նոր է վերադարձել Ճապոնիայից։ Նա պատրաստվում էր այստեղ լինել։ Նա ինձ հետ կլինի Լաբոկում։ Այսպիսով նա...նա ուժեղ մրսել էր, դրա համար այս անգամ չկարողացավ գալ, ինքն ու կինը։ Այսպիսով նա...

229 Բոլորը մտածում էին, որ նա Քալեբի նման է։ Նա կանգնեց այնտեղ՝ ասաց. — Եղբա՛յր Բրանհամ,— այդ շատ արժանապատիվ տեսքը, գիտեք, ասաց,— թույլ տուր ես գնամ և անեմ դա,— և ասաց,— եթե դու չես ուզում գնալ։

230 — Օ՜, եղբա՛յր Բոսվորտ, ես, ես չեմ ուզում, որ անես դա։ Դու իրարանցում կառաջացնես։

— Իրարանցման մեկ խոսք էլ չի լինի։

231 Հիմա, ավարտելուց առաջ լսեք սա։ Նա գնաց այնտեղ։ Ես ասացի. — Եթե իրարանցում չեք առաջացնի, լավ։

— Խոստանում եմ, որ չեմ վիճելու։

232 Այդ երեկո մոտ երեսուն հազար մարդ էր հավաքվել այդ լսարանում։ Եղբայր Վուդը, ով նստած է այստեղ, այդ ժամանակ ներկա էր և նստած էր այդ լսարանում։ Եվ ես...

233 Տղաս, թե...կինս ասաց. — Չես գնալո՞ւ այդ հավաքույթին։

234 — Ոչ։ Ես չեմ գնա այնտեղ և չեմ լսի նրանց վեճը։ Ոչ, պարոն։ Ես չեմ գնա այնտեղ և չեմ լսի այդ ամենը։

Երբ մթնեց ինչ-որ Բան ասաց՝ Գնա՛ այնտեղ։

235 Ես նստեցի տաքսի, եղբայրս, կինս ու երեխաներս և գնացինք։ Ես բարձրացա թատերահարկի երեսուն համարի նստատեղը, այդպես բարձր, և նստեցի։

236 Ծեր Բոսվորտ եղբայրը դիվանագետի նման դուրս եկավ այնտեղ, գիտեք։ Նա դուրս էր գրել մի քանի... Նա այնտեղ ուներ դուրս գրած վեց հարյուր տարբեր սուրբգրային խոստումներ։ Նա ասաց. — Դոկտոր Բե՛ստ, եթե գաք այստեղ և վերցնեք այս խոստումներից մեկը և ժխտեք դա Աստվածաշնչով։ Այս խոստումներից յուրաքանչյուրը գրված է Աստվածաշնչում, կապված է Հիսուս Քրիստոսի հետ, ով բժշկում է այս վերջին օրերում։ Եթե կկարողանաք վերցնել այս խոստումներից մեկը և

Սուրբ Գրքով հակադրել դա Աստվածաշնչի հետ, ես կնստեմ, կսեղմեմ ձեր ձեռքը և կասեմ՝ Դուք իրավացի եք։

237 — Ես կզբաղվեմ այդ ամենով, երբ բարձրանամ այնտեղ։ Նա ուզում էր ի վերջո, որ կարողանա Բոսվորտ եղբորը ոչնչացնել, հասկանում եք։

238 Այսպիսով Բոսվորտ եղբայրն ասաց. — Եղբայր Բե՛ստ, ես ձեզ մի հարց կտամ, և եթե դուք ինձ պատասխանեք «այո» կամ «ոչ»,— ասաց,—մենք հենց հիմա էլ դեբատը կավարտենք։

Եվ նա ասաց, նա ասաց. — Ես կզբաղվեմ դրանով։

Նա հարցրեց ժողովը վարողին, թե արդյոք կարող է հարց տալ իրեն։ Ասաց՝ Այո։

239 — Բե՛ստ եղբայր, Հիսուսի համար կիրառվո՞ւմ էին Եհովայի փրկարար անունները։ Այո՞, թե՞ ոչ։

240 Դա հարցերը լուծեց։ Դա վերջն էր։ Ասում եմ ձեզ, ես զգացի, որ ինչ-որ մի բան անցավ իմ միջով։ Ես ինքս երբեք չէի մտածել այդ մասին, հասկանո՞ւմ եք։ Ես մտածեցի. «Ո՛հ, Աստված իմ, նա չի կարող պատասխանել։ Դա կապանքի մեջ է»։

— Դոկտոր Բե՛ստ, ես, ես տագնապած եմ։

— Ես կզբաղվեմ դրանով։

241 — Ես զարմացած եմ, որ դուք չեք կարողանում պատասխանել իմ ամենաթույլ հարցին։ Նա վարունգի պես անվրդով էր և գիտեր, թե որտեղ էր կանգնած։ Հետո նա ուղղակի նստեց այնտեղ այդ Գրքով։

— Վերցրու քո երեսուն րոպեն, ես դրանից հետո կպատասխանեմ։

242 Եվ ծեր Բոսվորտ եղբայրը նստեղ այնտեղ և վերցրեց այդ Գիրքը և կապեց այդ մարդուն այնպիսի տեղում, որ նրա դեմքը այնքան կարմրեց, որ համարյա կարող էիր լուցքին վառել դրա վրա։

243 Նա վեր կացավ այնտեղից զայրացած և թղթերը շպրտեց հատակով մեկ, բարձարացավ այնտեղ և լավ կեմփբելիտյան քարոզ քարոզեց։ Ես մկրտական էի և գիտեի, թե նրանք ինչին են հավատում։ Ինքը երբեք...Նա քարոզում էր հարության վերաբերյալ՝ «երբ այս մահկանացուն կհագնի անմահությունը, այն ժամանակ մենք կունենանք աստվածային բժշկությունը»։ Ո՛հ, Աստված իմ։ Մեր ինչին է պետք աստվածային բժշկությունն այն բանից հետո, երբ անմահ ենք դառնալու

(«երբ այս մահկանացուն կհագնի անմահությանը», մեռելների հարություն)։ Նա նույնիսկ կասկածում էր այն հրաշքին, որ Հիսուսը կատարեց Ղազարոսի դեպքում, ասաց. «Նա նորից մահացավ և դա ընդամենը ժամանակավոր բան էր»։ Հասկանո՞ւմ եք։

244 Եվ երբ նա այդպես անցավ, ասաց. — Բերե՛ք այստեղ այդ աստվածային բժշկողին և թույլ տվեք ինձ տեսնել, թե ինչպես է նա դա անելու։

245 Այդ ժամանակ մի փոքրիկ շփոթություն տեղի ունեցավ։ — Ես զարմացած եմ ձեզ վրա, եղբայր Բեստ, որ չպատասխանեցիք իմ տված և ոչ մի հարցին։

246 Այդ ժամանակ նա իսկապես կատաղեց, ասաց. — Բերե՛ք այստեղ այդ աստվածային բժշկողին, և թույլ տվեք տեսնեմ, թե ինչպես է նա դա անելու։

— Բե՛ստ եղբայր, դուք հավատո՞ւմ եք մարդկանց փրկված լինելուն։

— Իհարկե։

— Դուք կուզեի՞ք աստվածային փրկիչ կոչվել։

— Իհարկե՝ ոչ։

247 — Ոչ էլ...Այն, որ դուք քարոզում եք հոգիների փրկության մասին, ձեզ աստվածային փրկիչ չի դարձնում։

—Դե, իհարկե, ոչ։

248 — Ոչ էլ Բրանհամ եղբորն է մարմնի բժշկության մասին քարոզելն աստվածային բժիշկ դարձնում։ Նա ոչ մի աստվածային բժիշկող էլ չէ, ինքը ընդամենը ուղղորդում է մարդկանց դեպի Հիսուս Քրիստոս։

249 — Բերե՛ք նրան այստեղ և թույլ տվեք ինձ տեսնել, թե ինչպես է նա դա անելու։ Թույլ տվեք տեսնեմ մարդկանց սրանից մի տարի հետո, և ես ձեզ կասեմ հավատում եմ Դրան թե ոչ։

250 Բոսվորտ եղբայրն ասաց. — Եղբայ՛ր Բեստ, դա նման է Գողգոթայում տեղի ունեցած և՛ս մի դեպքին. «Իջիր խաչից և մենք կհավատանք Քեզ»։ Հասկանո՞ւմ եք։

251 Այսպիսով, ո՛հ, այդ ժամանակ նա իսկապես պայթեց։ — Թույլ թվեք տեսնեմ, թե ինչպես է նա դա անում։ Թույլ տվեք տեսնեմ, թե ինչպես է նա դա անում։ Ժողովը վարողները նստեցրին նրան։ Նա գնաց այնտեղ, իսկ այնտեղ հոգեգալստական մի քարոզիչ էր կանգնած, նա հրեց նրան ամբողջ բեմահարթակով։ Դրա համար

նրանք այդ ժամանակ կանգնեցրին նրան։ (Եղբայր Բոսվորտն ասաց։ «Հանգստացե՛ք։ Ո՛չ, ո՛չ»)։ Ժողովը վարողները նստեցրին նրան։

252 Ռայմոնդ Ռիչին վեր կացավ, ասաց. — Սա՞ է հարավային մկրտական համաժողովի վերաբերմունքը։ Դուք մկրտական ծառայողներ, հարավային մկրտական համաժողովն է ուղարկե՞լ այս մարդուն այստեղ, թե՞ նա ինքն է եկել։ Նրանք չպատասխանեցին։ — Ես ձեզ հարց տվեցի։ Նա ճանաչում էր նրանց, բոլորին։

253 — Նա ինքն է եկել։ Որովհետև ես գիտեմ, որ մկրտականներն էլ են հավատում աստվածային բժշկությանը։ Այսպիսով հետո նա ասաց. — Նա ինքն է եկել։

254 Ահա թե ինչ կատարվեց հետո։ Բոսվորտ եղբայրն ասաց. — Ես գիտեմ, որ Բրանհամ եղբայրը հավաքույթում է, եթե նա ուզում է գալ և արձակել հավաքվածներին, շատ լավ։

Հովարդն ասաց. — Հանգիստ նստիր։

— Ես հանգիստ նստած եմ։

255 Եվ հենց այն պահին ինչ-որ Բան մոտեցավ և սկսեց պտտվել, և ես հասկացա, որ դա Տիրոջ Հրեշտակն էր, ասաց՝ Վե՛ր կաց։

256 Մոտ հինգ հարյուր մարդ իրենց ձեռք ձեռքի բռնաց *ասպես* միջանցք արեցին, իջան հարթակ։

257 Ես ասացի. — Բարեկամնե՛ր, ես ոչ մի աստվածային բժշկող էլ չեմ։ Ես ձեր եղբայրն եմ,— ասացի,— եղբա՛յր Բեստ, առանց որևէ...— կամ,— եղբա՛յր Բեստ,— ասացի ես,— առանց որևէ արհամարանքի ձեր նկատմամբ, եղբայրս։ Դուք ձեր համոզմունքների իրավունքն ունեք, նույնպես և ես,— ասացի,— իհարկե, տեսնում եք, որ դուք չկարողացաք ապացուցել ձեր տեսակետը եղբայր Բոսվորտին։ Ոչ էլ կարող եք որևէ մեկի դեպքում, ով ուշադիր կարդում է Աստվածաշունչը և գիտի այս բաները,— ասացի,— իսկ ինչ վերաբերում է մարդկանց բժշկությանը, եղբայր Բեստ ես չեմ կարող նրանց բժշկել։ Բայց ամեն երեկո ես այստեղ եմ, եթե ուզում եք տեսնել, թե ինչպես է Տերը հրաշքներ գործում, եկե՛ք այստեղ։ Նա ամեն երեկո անում է դա։

258 — Ես կուզեի տեսնել, թե ինչպես եք մեկնումեկին բժշկում, և թողնեք նայել նրանց։ Դուք կարող եք ձեր

հիպնոզով հիպնոզացնել նրանց, բայց,—ասաց,— ես կուզենայի տեսնել դա մեկ տարի անց:

— Դուք իրավունք ունեք ստուգելու նրանց, եղբայր Բեստ:

259 — Ոչ ոք, բացի ձեզանից՝ խփնված սուրբ թռչկոտողների խմբից, չի հավատում այդպիսի բաներին: Մկրտականներն այդպիսի անհեթեթությանը չեն հավատում:

260 Եղբայր Բոսվորտն ասաց. — Մեկ րոպե,— ասաց,— քանի՞ հոգի այս երկու շաբաթվա հավաքույթների ընթացքում, ովքեր լավ հարաբերությունների մեջ են Հաուստոնի հրաշալի այս մկրտական եկեղեցիների հետ, կարող են հաստատել, որ բժշկվել են Ամենակարող Աստծո կողմից, մինչ Բրանհամ եղբայրը եղել է այստեղ: Եվ մոտ երեք հարյուր մարդ ոտքի ելան: Ասաց. «Սրան ի՞նչ կասեք»:

261 — Նրանք մկրտականներ չեն,— ասաց,— ամեն մեկը կարող է ցանկացած բան վկայել, բայց դա դեռ չի նշանակում, որ դա ճիշտ է:

262 — Աստծո Խոսքն է ասում, որ դա ճիշտ է, և դուք չեք կարող դեմ կանգնել դրան: Մարդիկ նույնպես ասում են, որ դա ճիշտ է, և դուք չեք կարող դրանից հետ կանգնել: Հետևաբար ի՞նչ եք անելու: Հասկանում եք, այսպես:

263 Ես ասացի. — Եղբա՛յր Բեստ, ես միայն ասում եմ Ճշմարտությունը: Եվ եթե ես ճշմարտացի եմ, Աստված պարտավոր է պաշտպանել այդ Ճշմարտությունը,— ասացի,— եթե Նա չ...Եթե Նա չպաշտպանի Ճշմարտությունը, ուրեմն Ինքն Աստված չէ,— ասացի,— ես չեմ բժշկում մարդկանց: Ես ծնվել եմ իրադարձությունները տեսնելու պարգևով, տեսնել, թե ինչպես են դրանք կատարվում,— ասացի,— ես գիտեմ, որ ինձ սխալ են հասկանում, բայց ես ավելին չեմ կարող անել իմ սրտի համոզմունքն կատարելուց բացի,— ասացի,— ես հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել մեռելներից: Եվ եթե Հոգին գալիս և ցույց է տալիս տեսիլքներ և այլն, եթե կասկածում եք դրանում, եկեք և պարզեք դա,— ասացի,— ահա և վերջ,— բայց ասացի,— բայց ինչ վերաբերում է ինձ, ես ինձանից ոչինչ չեմ կարող անել,— —ասացի,— եթե ես Ճշմարտությունն եմ ասում, Աստված պարտավոր է վկայել, որ սա է Ճշմարտությունը:

264 Եվ հենց այդ ժամանակ ինչ-որ Բան անցավ. «Խ-2-2-2-2-2»: Ահա Նա գալիս է, իջնում է: Ամերիկայի լուսանկարիչների Ասոցիացիան՝ Դուգլաս Ստուդիան Հյուստոնում՝ Տեքսաս նահանգում, ունենալով այնտեղ մեծ ֆոտոխցիկ (նրանց արգելված է նկարել), նկարել են նկարը:

265 Երբ նրանք այնտեղ էին պարոն Բեստին լուսանկարելու համար, և նա, նա ասել էր, մինչ իմ գնալը այնտեղ, ասել էր. «Սպասե՛ք: Ես այստեղ վեց նկարազարդ ամսագրեր ունեմ»: Նա ասել էր. «Այստեղ, հիմա նկարեք ինձ»: Եվ նա մատն այսպես դրեց այդ տարեց սուրբ մարդու քթին և ասաց՝ Հիմա նկարեք ինձ: Եվ նրանք նկարեցին: Հետո նա բոունցքը հանեց և բարձրացրեց այն, ասաց՝ Հիմա նկարեք ինձ: Եվ նրանք այդպես նկարեցին: Հետո այդպես արեց. կեցվածք ընդունելով իր նկարի համար: Նա ասաց. — Դուք կտեսնեք սա իմ ամսագրում», այդպես:

266 Բոսվորտ եղբայրը կանգնած էր այնտեղ և մի բան էլ չասաց: Հետո նրանք ուղղակի նկարեցին Սրա նկարը:

267 Այդ երեկո տուն դարձի ճանապարհի (կաթոլիկ տղա էր լուսանկարել դա), նա ասել էր այս մյուս տղային, նա ասել էր. «Ի՞նչ ես մտածում Դրա մասին»:

268 Այս մյուսն ասել էր. «Ես գիտեմ, որ քննադատել եմ նրան: Այդ խպիպը, որ հեռացավ այդ կնոջ կոկորդից, ես ասել էի, որ նա հիպնոզացրել է իրեն»: Ասել էր. «Ես կարող էի սխալվել այդ հարցում»:

— Ի՞նչ ես կարծում այդ նկարի մասին:

— Ես չգիտեմ:

269 Նրանք դրեցին դա երևացուցիչի մեջ: Ահա նրա նկարը, կարող եք հարցնել նրան, եթե ուզում եք: Նրանք գնացին տուն, նա նստել էր այնտեղ և սիգարետ էր ծխում: Մտան ներս և հանեցին եղբայր Բոսվորտի նկարներից մեկը, այն նեգատիվ էր: Երկրորդը հանեցին, երրորդը, չորրորդը, հինգերորդը, վեցերորդը, բոլորն էլ դատարկ էին: Աստված թույլ չէր տա, որ Իր սուրբ տարեց մարդու նկարը մնա այնտեղ՝ այդ կեղծավորի հետ, ով բոունցը թափահարում էր այդպես իր քթի տակ: Թույլ չէր տա դա:

270 Նրանք հաջորդը հանեցին, և ահա Այն: Ասացին, որ այդ գիշեր այդ մարդը սրտի կատված է ստացել:

271 Նրանք այդ նեգատիվն ուղարկեցին Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան: Այն հաստատել էին հեղինակային իրավունով և նորից հետ էին ուղարկել:

272 Ջորջ Լեյսին, ՀԴԲ-ի մատնահետքերի և փաստաթղթերի և այլն բաժնի տնօրենը, ամբողջ աշխարհում գոյություն ունեցող ամենամեծերից մեկը, բերվել է այնտեղ և երկու օր պահվել դրա վրա՝ ֆոտոխցիկի, լույսերի և մնացած ամեն ինչ փորձարկելու համար: Եվ երբ այդ օրը մենք եկանք, նա ասաց. — Պատվելի Բրանհամ, ես էլ եմ եղել ձեր քննադատը,— ասաց,— ես էլ եմ ասել, որ դա հոգեբանություն է, ինչ-որ մեկն ասաց, որ տեսել է այդ Լույսերը և նման բաներ,— ասաց,— գիտեք, հին կեղծավորներն ասում են (նա նկատի ուներ անհավատներին), այդ նկարներն ամենուրեք, այդ լուսապսակը Քրիստոսի, սուրբերի շուրջ,— ասաց,— դա պարզապես հոգեբանություն է,— բայց ասաց,— պատվելի Բրանհամ, այս ֆոտոխցիկի մեխանիկական աչքը հոգեբանությունը չի կարող լուսանկարել: Լույսն անցել է ոսպնյակով և հետք թողել նեգատիվի վրա, և Դա այդտեղ էր: Եվ նա ասաց...

273 Ես հանձնել եմ դա իրենց: Ասաց. — Ո՛հ, պարոն, գիտե՞ք, թե ինչ աչժե դա:

—Ոչ ինձ համար, եղբա՛յր, ոչ ինձ համար: Եվ այսպես նա ասաց...

274 — Իհարկե, ձեր կենդանության ժամանակ դա ոչ մի ազդեցություն չի ունենա, բայց մի օր, եթե քաղաքակրթությունը գնա առաջ և քրիստոնեությունը մնա, սրա հետ ինչ-որ բան կկատարվի:

275 Այսպիսով, բարեկամնե՛ր, այս երեկո եթե սա մեր վերջին հավաքույթն է երկրի վրա, մենք նստել ենք ամենակարող Աստծո ներկայության մեջ: Իմ վկայությունը ճշմարիտ է: Շատ ու շատ բաներ, հատորներ կպահանջվեին դա գրելու համար, բայց ես ուզում եմ, որ դուք իմանաք:

276 Այստեղ քանի՞սն են, ովքեր իրականում առանց նկարի տեսել են Լույսը կանգնած այնտեղ, որտեղ ես քարոզում էի: Բարձրացրեք ձեր ձեռքերը ողջ շենքով, ով երբևէ տեսել է Այն: Տեսնում եք, ութ կամ տաս ձեռքեր այստեղ նստածներից:

277 Դուք կասեք. «Կարող էին...կարո՞ղ էին արդյոք նրանք տեսնել Դա, իսկ ես ոչ»: Այո, սըր:

278 Այդ, այդ աստղը, որին հետևում էին մոգերը անցել էր բոլոր աստղադիարանների վրայով: Ոչ ոք, նրանցից բացի, դա չտեսավ: Նրանք միակն էին, ովքեր տեսան Դա:

279 Եղիան կանգնած էր այնտեղ և նայում էր այդ բոլոր հրեղեն կառքերին և նման բաներ: Գեեզին էլ նայեց շուրջբոլորը, բայց նա ոչ մի տեղ դրանք չտեսավ: Աստված ասաց. «Բա՛ց նրա աչքերը, որ տեսնի»: Եվ այդ ժամանակ նա դրանք տեսավ, հասկանում եք: Բայց նա լավ տղա էր, կանգնած էր այնտեղ և նայում էր շուրջը, բայց ինքը չէր տեսնում դա: Անկասկած: Ոմանց տրված է տեսնել, իսկ ոմանց՝ ոչ: Եվ դա ճշմարտություն է:

280 Բայց հիմա նրանք, ովքեր երբեք չեն տեսել Դա, երբեք Դա չեն տեսել, և նրանք, ովքեր տեսել են Դա իրենց բնական աչքերով և երբեք չեն տեսել նկարը, մինչդեռ նրանք, ովքեր տեսնում են նկարը ավելի մեծ ապացույց ունեն, քան նրանք ովքեր տեսել են Դա իրենց բնական աչքերով: Որովհետև ձեր բնական աչքով դուք կարող էիք սխալվել, դա կարող էր օպտիկական պատրանք լինել: Ճի՞շտ է: Բայց Դա օպտիկական պատրանք չէ, Դա Ճշմարտություն է, ինչը գիտական ուսունմասիրությունն ապացուցում է, որ Դա Ճշմարտություն է: Հետևաբար Տեր Հիսուսն է սա արել:

«Այդ դեպքում ի՞նչ եք կարծում, ի՞նչ է դա,— ասում եք դուք,—Բրանհամ եղբայր»:

281 Ես հավատում եմ, որ Դա նույն Կրակե Սյունն է, որն առաջնորդում էր Իսրայելի զավակներին Եգիպտոսից Պաղեստին: Ես հավատում եմ, որ Դա նույն Լույսի Հրեշտակն է, որ մտավ բանտ, մոտեցավ սուրբ Պետրոսին և դիպչեց նրան, գնաց առաջ, դուռը բացեց և դրեց նրան լույսի մեջ: Ես նաև հավատում եմ, որ Դա Հիսուս Քրիստոսն է, ով նույն է երեկ, այսօր և հավիտյան: Ամե՛ն: Նա նույն Հիսուսն է այսօր, ինչպիսին որ եղել է երեկ: Նա հավիտյան նույն Հիսուսը կմնա:

282 Եվ մինչ ես խոսում եմ Դրա մասին, այդ նույն Լույսը, որը նկարի վրա է...կանգնած է մոտ երկու ոտնաչափ հեռու այնտեղից, որտեղ ես կանգնած եմ հիմա: Դա ճիշտ է: Ես Դա իմ, իմ աչքերով չեմ տեսնում, բայց գիտեմ, որ Այն կանգնած է այստեղ: Ես գիտեմ, որ Այն հենց հիմա իմ ներսում է: Ո՛հ, եթե միայն կարողանայիք իմանալ տարբերությունը, երբ ամենակարող Աստծո զորությունը պարուրում է և, ինչպես են իրողություններն այլ տեսք ստանում:

283 Դա մարտահրավեր է ցանկացածի համար։ Ես չէի պատրաստվում որևէ հիվանդի համար աղոթել։ Ես պատրաստվում էի ընծայում անել։ Բայց տեսիլքը կախված է մարդկանց գլխավերևում։ Ըհը։ Աստված գիտի դա։ Ես չէի պատրաստվում աղոթքի շարք կանչել, դուք ընդամենը մնալու եք ձեր տեղերում։ Ձեզանից քանի՞սն աղոթքի քարտ չունեն։ Եկե՛ք տեսնենք ձեր ձեռքերը, ով աղոթքի քարտ չունի, ով չունի աղոթքի քարտ։

284 Սևամորթ տիկին է նստած այստեղ, ես տեսա, որ դուք բարձրացրիք ձեր ձեռքերը։ Ճի՞շտ է։ Պարզապես կանգնեք, որպեսզի ես կարողանամ մի րոպեով առանձնացնել ձեզ։ Ես չգիտեմ, թե Սուրբ Հոգին ինչ է ասելու, բայց դուք ահավոր անկեղծ եք նայում ինձ։ Դուք աղոթքի քարտ չունե՞ք։ Եթե ամենակարող Աստված ինձ հայտնի, թե ինչ խնդիր ունեք...Ես պարզապես սա անում եմ սկսելու, սկիզբ դնելու համար։ Դուք հավատո՞ւմ եք, որ ես...Գիտեք, որ ոչինչ...ինձանում ոչ մի լավ բան չկա։ Եթե դուք ամուսնացած կին եք, ես ձեր ամուսնուց առավել չեմ։ Ես ընդամենը մարդ եմ։ Բայց Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, և Նա ուղարկեց Իր Հոգին այս բաները հաստատելու համար։

285 Եթե Աստված ինձ ասի, թե ինչ խնդիր ունեք (իսկ դուք գիտեք, որ ես ոչ մի կերպ չեմ կարող հաղորդակցվել ձեզ հետ) կհավատա՞ք ձեր ողջ սրտով։ [Քույրիկը խոսում է Բրանհամ եղբոր հետ։ Ծան. խմբ.]։ Աստված օրհնի ձեզ։ Ուրեմն ձեր արյան ճնշումը հեռացավ ձեզանից։ Դա հենց այն էր, ինչից դուք տառապում էիք։ Ճիշտ չէ՞ր։ Ուրեմն նստեք։

286 Ընդամենը մի անգամ հավատացե՛ք դրան։ Ես հրավիրում եմ բոլորին հավատալ դրան։

287 Տեսե՛ք։ Թույլ տվեք ձեզ մի բան ասել։ Մարթան մոտենալով Տեր Հիսուսին։ Այդ պարգևը երբեք չէր գործի...Այն բանից հետո, երբ Հայրն Իրեն արդեն ցույց էր տվել, թե ինչ է անելու։ Այն երբեք չէր գործի։ Բայց Մարթան ասաց. «Տե՛ր, ես...Եթե Դու այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի,— ասաց,— բայց հիմա էլ գիտեմ, որ ինչ որ Աստծուց խնդրես, Աստված կտա Քեզ»։

288 Հիսուսն ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը, Ինձ հավատացողը, եթե մեռնի էլ, կապրի, և ով կենդանի է և հավատում է Ինձ, հավիտյան չի մեռնի։ Հավատո՞ւմ ես սրան»։

289 Լսե՛ք, թե ինչ պատասխանեց Մարթան։ Նա ասաց. «Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ, որ այն ամենը, ինչ ասացիր, Ճշմարտություն է։ Ես հավատում եմ, որ Դու ես Աստծո Որդին, որ պետք է աշխարհ գայիր»։ Դա նրա մոտեցումն է՝ խոնարհաբար։

Դուք ձեզ այլ կերպ եք զգում, չէ՞, տիկին։ Այո։ Դա ճիշտ է։

290 Ահա մի կին, որ նստած այնտեղ՝ հենց ձեր կողքին, նույնպես տառապում է արտրիտով և կանացի հիվանդությամբ։ Ճիշտ չէ՞, տիկին։ Կանգնեք մեկ րոպեյով, կարմիր հագուստով տիկին։ Դուք այնքան մոտ էիք, տեսիլքը մոտեցավ ձեզ։ Արտրիտ, կանացի հիվանդություն է։ Ճի՞շտ է։ Ձեր կյանքում ինչ-որ բան կա (դուք ունեք, պարզ ու հստակ տեսնում եմ ձեզ) շատ հոգսեր, շատ խնդիրներ ունեք կյանքում։ Եվ այդ խնդիրը կապված է ձեր սիրելիի հետ, դա ձեր ամուսին է։ Նա հարբեցող է։ Չի հաճախում եկեղեցի։ Եթե դա ճիշտ է, բարձրացրե՛ք ձեր ձեռքը։ Աստված օրհնի ձեզ, տիկին։ Վերադարձե՛ք տուն և ստացե՛ք ձեր օրհնությունը։ Դուք բժշկված եք, ձեր շուրջը լուսավորվում է։

291 Այնտեղ՝ նրա կողքին մի տղամարդ է նստած։ Դո՛ւք, պարոն, հավատո՞ւմ եք։ [Եղբայրը պատասխանում է՝ Այո, հավատում եմ։ Ծան. խմբ.]։ Ձեր ո՞ղջ սրտով։ [«Այո՛, պարոն»]։ Դուք կորցրել եք զգայարաններից մեկը։ Եվ դա հոտառության զգայարանն է։ Ճիշտ չէ՞։ Եթե այդպես է, ձեռքով արեք։ [«Դա ճիշտ է»]։ *Այսպես* դրե՛ք ձեր ձեռքը ձեր բերանին և ասե՛ք. «Տե՛ր Հիսուս, ես հավատում եմ Քեզ իմ ողջ սրտով»։ [«Տեր Հիսուս, ես հավատում եմ Քեզ իմ ողջ սրտով»]։ Աստված օրհնի ձեզ։ Հիմա գնացե՛ք։ Դուք կստանաք ձեր բժշկությունը։

292 Հավատք ունեցե՛ք Աստծո հանդեպ։ Ի՞նչ եք մտածում այդ մասին, դուք. որ նստած եք այնտեղ՝ խորքում։ Դուք հավատո՞ւմ եք։ Ակնածալից եղեք։

293 Ահա այնտեղ՝ անկյունում մի կին է նստած։ Տեսնում եմ, թե ինչպես է այդ Լույսը կախված նրա գլխավերևում։ Միակ միջոցը, թե ես ինչպես կարող եմ դա պատմել, այն ժամանակ է, երբ այդ Լույսն է կախվում։ *Այս* Լույսը հենց այստեղ կախված է այս կնոջ գլխավերևում։ Գուցե մեկ րոպեից, եթե ես կարողանամ տեսնել, թե ինչ է դա։ Դա կվերածվի...Տիկինը տառապում է սրտի հիվանդությամբ։ Նա նայում է ուղղիղ ինձ։

294 Նրա ամուսինն էլ նստած է իր կողքին։ Ամուսինը նույնպես ինչ-որ հիվանդություն ունի, ուղղակի հիվանդ է, խանգարում է, հիվանդ է։ Ճիշտ չէ՞, սըր։ Բարձրացրեք ձեր ձեռքերը, եթե դա ճիշտ է։ Դա ճիշտ է, այդ դուք եք, տիկին, այնտեղ գլխաշորով։ Պարո՛ն, ճիշտ չէ՞ դա։ Ձեզ մոտ այսօր խանգարում չի եղե՞լ։ Դուք ստամոքսի խանգարում ունեք։ Դա ճիշտ է։

295 Դուք երկուսդ էլ հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով։ Ընդունո՞ւմ եք դա։ Սը՛ր, ասում եմ ձեզ, դուք նույնպես, ես տեսնում եմ, որ ձեզ մոտ ծխելու սովորություն է։ Դադարեցրե՛ք անել դա։ Դուք սիգար եք ծխում, չպիտի անեք դա, դա հիվանդացնում է ձեզ։ Ճիշտ չէ՞։ Եթե այդպես է, այսպես ձեռքով արեք։ Ահա թե ինչից է ձեզ մոտ խանգարում առաջանում։ Դա վատ է անդրադառնում ձեր նյարդերի վրա։ Դեն նետեք այդ գարշելի բանը և այլևս մի արեք դա, և դա կդադարի ձեզ մոտ և ամեն ինչ կարգին կլինի, իսկ ձեր կնոջ սրտի հիվանդությունը կհեռանա իրենից։ Հավատո՞ւմ եք դրան։ Մի՞թե դա ճիշտ չէ։ Ես ձեզ այստեղից չեմ տեսնում, և դուք դա գիտեք, բայց դուք սիգարներ եք պահում...ձեր առջևի գրպանում։ Դա ճիշտ է։ Հանե՛ք դա ձեր գրպանից, դրե՛ք ձեր ձեռքը ձեր կնոջ վրա և ասե՛ք Աստծուն, որ նման բաների հետ ավարտել եք, և դուք տուն կվերադառնաք բժշկված, դուք և ձեր կինն էլ կառողջանաք։ Թող օրհնյա՜լ լինի Տեր Հիսուսի Անունը։

Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով։

296 Ահա այս կինն նստած է այստեղ, նայում է ինձ։ Դուք... այնտեղ՝ առջևի նստարանում, նստած է հենց այստեղ։ Փոքրամարմին տիկին է...նայում է ինձ, նստած է հենց այնտեղ։ Դուք չ...Դուք աղոթքի քարտ ունե՞ք, տիկին, հենց այստեղ։ Դուք աղոթքի քարտ չունե՞ք։ Հավատո՞ւմ եք ձեր ամբողջ սրտով։ Հավատո՞ւմ եք, որ Հիսուս Քրիստոսը կարող է ձեզ բժշկել։

297 Ի՞նչ եք մտածում այդ մասին, դուք, որ նստած եք նրա կողքին։ Դուք աղոթքի քարտ ունե՞ք, տիկին։ Չունե՞ք։ Դուք նույնպես ուզո՞ւմ եք բժշկվել։ Չէի՞ք ուզենա գնալ և առաջվա պես նորից ուտել, որ ստամոքսի խնդիրն լուծվեր։ Դուք հավատո՞ւմ եք, որ Հիսուսը հիմա բժշկում է ձեզ։ Վեր կացեք, եթե հավատում եք, որ Քրիստոսը բժշկել է ձեզ։ Ձեզ մոտ ստամոքսի խոց է եղել, այդպես չէ՞։ Դա առաջացել է նյարդային վիճակից։ Երկար ժամանակ է, ինչ նյարդային եք եղել։ Հատկապես թթուներ և այլն, կամ, ես ի նկատի ունեմ թթու է արտադրվում և ատամները

զգայուն են դարձնում, երբ կերակուրը հետ եք փսխում ձեր բերանը: Դա ճիշտ է: Այո, սրը: Դա մարսողական խոց է, այն գտնվում էր ստամոքսի ներքևի հատվածում: Այն երբեմն այրում է, հատկապես կարակով տոստ ուտելուց հետո: Ճի՞շտ է: Ես ձեր մտքերը չեմ կարդում, բայց Սուրբ Հոգին անսխալական է: Դուք հիմա բժշկված եք: Վերադարձեք տուն և բժշկված եղեք:

298 Ինչպե՞ս եք, ի՞նչ կա այս ուղղությամբ: Ձեզանից ոմանք այնտեղ, ովքեր առանց աղոթքի քարտի են, բարձրացրեք ձեր ձեռքը: Ինչ–որ մեկը, ով աղոթքի քարտ չունի: Շատ լավ, հարգալից եղեք, հավատացեք ձեր ողջ սրտով: Իսկ օթյակո՞ւմ եղողները: Հավատք ունեցե՛ք Աստծո հանդեպ:

299 Ես ինքս չեմ կարող սա անել, դա միայն Նրա ինքնիշխան շնորհն է: Հավատո՞ւմ եք: Ես միայն կարող եմ ասել, երբ Նա ինձ ցույց է տալիս: Որքան որ ձեր հավատքն է…Ես ձեր հավատքը շարժելու համար եմ դա ասում, հետո տեսնում, թե որ ուղությամբ է Նա ինձ առաջնորդելու: Դուք գիտակցեցի՞ք, որ սա, սա ձեր եղբայրը չէ: Դուք կանգնած եք Նրա ներկայության մեջ: Սա ես չեմ անում, այլ ձեր հավատքն է գործի դնում Դա: Ես չեմ կարող գործի դնել Այն: Ձեր հավատքն է դա անում: Ես Այն գործելու ոչ մի միջոց չունեմ: Մեկ րոպե:

300 Այս անկյունում ես տեսնում եմ սևամորթ մի տղամարդու նստած այնտեղ, տարեց է, ակնոց է կրում: Դուք աղոթքի քարտ ունե՞ք, սը՛ր: Մի րոպե կանգնեք: Ձեր ողջ սրտով հավատո՞ւմ եք, որ ես Աստծո ծառան եմ: Դուք ուրիշ մարդու մասին եք մտածում, այդպես չէ՞: Եթե դա ճիշտ է, ձեռքով արեք: Ոչ թե որովհետև այդ ես եմ, ձեր եղբայրը: Հիմա, դուք աղոթքի քարտ չունեք: Դուք ոչ մի կերպ չէիք կարողանա աղոթքի շարք ընկնել, որովհետև աղոթքի քարտ չունեք: Հիմա, եթե որևէ մեկը ձեզանից աղոթքի քարտ ունի, մի, մի, մի՛ վեր կացեք, որովհետև դուք արդեն հնարավորություն ունեք գալ շարքի մեջ:

301 Բայց ես տեսնում եմ, որ այդ Լույսը կախված է նրա գլխավերևում: Այն դեռ երբեք չի խախտել տեսիլքը: Ես ձեզ չեմ կարող բժշկել, եղբայր, չեմ կարող: Միայն Աստված կարող է դա անել: Բայց ձեր…ձեր…դուք հավատք ունեք: Դուք հավատում եք: Եվ ինչ–որ բան ինչ որ ձևով դա, դա առաջացրեց:

302 Եթե ամենակարող Աստվածը հայտնի այս մարդուն, թե ինչում է նրա խնդիրը, մնացածներդ կընդունե՞ք ձեր

բժշկութունը։ Ահա մի տղամարդ, ով կանգնած է տաս, տասնհինգ յարդ ինջանից հեռու, ես նրան կյանքում երբեք չեմ տեսել։ Նա ընդամենը մի մարդ է, ով կանգնած է այնտեղ։ Եթե ամենակարող Աստված հայտնի, թե ինչ խնդիր ունի այս մարդը, ամենքդ պետք է լավացած դուրս գաք այստեղից։ Ավելին ի՞նչ կարող է անել Աստված։ Ճի՞շտ է։

303 Սը՛ր, ձեզ հետ ամեն ինչ կարգին է։ Դուք թույլ եք, գիշերները մի քիչ արթնանում եք շագանակագեղձ և նման բաներ, բայց ձեր խնդիրը դա չէ։ Ձեր խնդիրը կապված է ձեր տղաի հետ։ Իսկ նա ինչ-որ պետական հաստատությունում է, և ունի երկակի անհատականություն։ Ճի՞շտ է։ Եթե դա ճիշտ է, ձեռքով արեք։ Դա միանգամայն ճիշտ է։

304 Քանի՞սն են հիմա հավատում, որ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին կանգնած է այստեղ։ Եկե՛ք կանգնենք, փառք տանք և ստանանք մեր բժշկությունը։

305 Ամենակա՛լ Աստված՝ Կյանքի Հեղինակ, բոլոր պարգևների Շնորհող, Դու այստեղ ես, նույն Տեր Հիսուս Քրիստոսը, որ նույնն է երեկ, այսօր և հավիտյան։

306 Սատանա՛, դու երկար ժամանակ ես խաբել այս մարդկանց, դուրս արի՛ նրանց միջից։ Ես քեզ հրամայում եմ կենդանի Աստծով, Ում ներկայությունը Կրակե Սյան տեսքով հիմա այստեղ է, հեռացի՛ր այս մարդկանցից։ Դուրս արի՛ նրանց միջից Հիսուս Քրիստոսի Անունով։

307 Բոլորդ բարձրացրեք ձեր ձեռքերը և փառք տվեք Աստծուն և ստացեք ձեր բժշկությունը, բոլորդ։

55-0117 Ինչպես հրեշտակը եկավ ինձ մոտ և նրա հանձնարարությունը
«Լեյնի անվան տեխնիկական միջնակարգ դպրոց»
Չիկագո, Իլլինոյս ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org